



Funded by the European Union



# Ուղեցույց գյուղատնտեսության մեջ հետադետային կարիքների գնահատում համայնքային և մարզային մակարդակով

Դրագան Անգելովսկի

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ՊԱՐԵՆԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ  
2017  
GCP/ARM/006/EC

## Բովանդակություն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
1.1 ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՆՊԱՏԱԿԸ.....	3
1.2 ԱՂԵՏՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՆԵՐԿԱՅԻՍ ԿԱՌՈՒՑՎԱԾԸ՝ ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ.....	3
2. ՀԵՏԱՂԵՏԱՅԻՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ.....	4
2.1 ԱԶԴԱՆՇԱՆ ՀԵՏԱՂԵՏԱՅԻՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ.....	4
2.2. ՀԵՏԱՂԵՏԱՅԻՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ.....	6
3. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ.....	9
3.1 ԱՂԵՏԻՆ ՆԱԽՈՐԴՈՂ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ.....	9
3.2 ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ՝ ԱՂԵՏԻՆ ՀԱԶՈՐԴՈՂ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....	11
4. ՎՆԱՄՆԵՐԻ ԵՎ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐ.....	41
5. ԱՂԵՏԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ.....	43
5.1 ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ.....	43
5.2 ՄԱՐԴԿԱՆՑ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՆԵՐՈՒԺ.....	44
5.3 ԱՂԵՏՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ.....	45
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԱԹՈՒՂԹ.....	47
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԱՐԺԵՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԱԹՈՒՂԹ.....	57
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՑԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՕՐԱՅՈՒՅՑԻ ՁԵՎԱԹՈՒՂԹ.....	58
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ԱՂԵՏԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳԱՅՈՒՑԱԿ/ՀԱՐՑԱՇԱՐ.....	59

# 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

## 1.1 ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՆՊԱՏԱԿԸ

Սույն ուղեցույցը հանդիսանում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից 2015թ.-ին ընդունված «Գյուղատնտեսության ոլորտում աղետներից բխող կարիքների գնահատման ուղեցույցի և մեթոդոլոգիայի» արդիականացված տարբերակը<sup>1</sup>:

Ուղեցույցը հիմնված է աղետներին հաջորդող կարիքների գնահատման՝ Միավորված ազգերի կազմակերպության, Համաշխարհային բանկի և Եվրոպական միության կողմից խրախուսվող (2014) մեթոդոլոգիայի սկզբունքների վրա:

Ուղեցույց-փաստաթղթի նպատակն է Հայաստանի համայնքներին և մարզերին տրամադրել միասնական մեթոդաբանություն, որը կիրառվելու է գյուղատնտեսական ոլորտում, ներառյալ՝ բուսաբուծության, անասնաբուծության, ձկնաբուծության և անտառային տնտեսության մեջ վնասների և կորուստների գրանցման և հաշվառման դեպքերում:

Սույն փաստաթուղթը տրամադրում է որոշակի ուղեցույցեր և ձևաթղթեր՝ աղետին հաջորդող աղետալի հետևանքների և կորուստների հաշվառման նպատակով: Այդ ձևաթղթերը հնարավորություն են ընձեռում արձանագրել տարբեր մանրամասներ, որոնք անհրաժեշտ են գյուղատնտեսական վնասի և կորստի ճշգրիտ վայրն ու ծավալները որոշելու, ինչպես նաև հավաքագրելու և ամփոփելու տնտեսական ազդեցության գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվություն, որը պետք է կենսական կարևորություն ունեցող բաղադրիչ հաղիսանա վերականգնման և վերակառուցման պլանի նախագծման ընթացքում:

Ուղեցույցը նպատակ է հետապնդում համարել ՀՀ Կառավարության՝ 2011թ. նոյեմբերի 10-ի թիվ-1582-Ն որոշման դրույթները՝ ավելի մանրամասնորեն նկարագրելով և հստակեցնելով Գյուղատնտեսության նախարարության գործողությունները, ինչպես նաև տրամադրելով տվյալների միասնական հավաքագրում, գնահատում և գնահատման ձևաթղթեր ու գործընթացներ, որոնք առաջնորդում են դեպի ձկուն արձագանքման քաղաքականության մշակումը (կանխարգելում, մեղմացում և վերականգնում):

## 1.2 ԱՂԵՏՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՆԵՐԿԱՅԻՍ ԿԱՌՈՒՑՎԱԾԸ՝ ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

Հայաստանի համայնքները կազմում են մշտական համայնքային հանձնաժողովներ՝ աղետի հետևանքով առաջացած վնասի/կորստի գնահատման համար, որոնք ըստ ՀՀ Կառավարության 2011թ. նոյեմբերի 10-ի N-1582-Ն որոշման բաղկացած են տեղի շահագրգիռ անձանցից (օր.՝ ֆերմերներ, առաջնորդներ, քաղաքապետեր, և այլն)

Այն դեպքում, երբ գյուղատնտեսության ոլորտը աղետի հետևանքով վնաս է կրում, տեղական համայնքային հանձնաժողովները պետք է ստուգեն և զննեն վնասի չափը և սահմանեն աղետի հետևանքով առաջացած տնտեսական կորստի չափը:

Համայնքային մակարդակով վնասի գնահատման նպատակով դաշտային այցելություններն իրականացվում են Տեղական հանձնաժողովների կողմից՝ տուժած բնակչության և շահագրգիռ տարբեր կողմերի հետ (ընկերություններ, ծառայություններ մատուցողներ, փորձագետներ և այլն) ուղիղ հարցազրույցներ իրականացնելու միջոցով, որոնց նպատակն է գնահատել վնասի արժեքն ու որոշել վերանորոգման և վերակառուցման միավոր ծախսերը: Վնաս կրած մարզերում և համայնքներում դաշտային գնահատումը կարող է իրականացվել երկու շաբաթվա ընթացքում, բայց ոչ վաղ, քան աղետից մեկ շաբաթ անց:

<sup>1</sup>Նախարարի հրաման

Անհրաժեշտության դեպքում հանձնաժողովներին աջակցում են Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության (ՏԿԱԻՆ) և այլ նախարարությունների՝ արտակարգ իրավիճակների մասնագետները, ովքեր պատասխանատվություն են կրում տուժած հատվածներում վնասների/կորուստների վերաբերյալ տվյալների հավաքագրման համար:

Աղետի վնասի/կորստի գնահատումը ներառում է աղետի հետևանքով վնասված գյուղատնտեսական ողջ հողատարածքը, վնաս կրած մշակաբույսերի և կենդանիների տիպաբանությունը և ֆինանսական առումով վնասին հաջորդող կորուստները: Որոշ դեպքերում, գնահատման ընթացքում տվյալներ են հավաքագրվում սոցիալ-տնտեսական տարբեր ցուցանիշների վերաբերյալ:

Վնասների և կորուստների գնահատման վերջնական արժեքն ուղարկվում է մարզպետարանի Գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն՝ պաշտոնական հաղորդագրության՝ «որոշման» միջոցով: Մարզպետարանի՝ գյուղատնտեսության և բնապահպանության վարչությունն իր տեխնիկական անձնակազմի միջոցով ստուգում է տվյալների հավաստիությունը:

Մարզի վարչակազմը պատասխանատվություն է կրում ստուգումների նպատակով դաշտային այցելություններ իրականացնելու համար՝ տեղական հանձնաժողովների կողմից տրամադրվող տեղեկատվությունը խաչաձև ստուգման ենթարկելու նպատակով: Ստուգողական բնույթ կրող դաշտային այս այցելությունները տեղական մակարդակում վնասների գնահատման նպատակով իրականացվում են կամայական ընտրության հիմունքներով: Մարզային մասշտաբով կարևորություն ունեցող գույքի (ոռոգման ցանցեր, ճանապարհներ) վնասների դեպքում մարզային վարչակազմի կողմից դաշտային այցելություններն ու գնահատումը պարտադիր բնույթ են կրում: Մարզային մակարդակով տվյալները (որոշումները) մարզպետարանների Գյուղատնտեսության և բնապահպանության վարչությունների կողմից ուղարկվում են ԳՆ-ը՝ հավաստման և վերանայման նպատակով: Վերանայումից հետո ԳՆ-ն պաշտոնական զեկույց է ուղարկում ՀՀ կառավարությանը, որը պատասխանատվություն է կրում վնաս կրած համայնքներին օժանդակելու նպատակով անհրաժեշտ ֆինանսավորում տրամադրելու համար:

Տվյալները պետք է հավաքագրվեն և ներկայացվեն համակարգված կերպով, ինչը հնարավորություն կընձեռնի թե՛ պատկերացում կազմել փաստացի վնասների մասին, թե՛ հետևել ինչպես է յուրաքայուր տրամադրված արժեք (գումար) հաշվարկվում:

## 2. ՀԵՏԱՂԵՏԱՅԻՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

### 2.1 ԱԶԴԱՆՇԱՆ ՀԵՏԱՂԵՏԱՅԻՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ

Գյուղատնտեսության ոլորտի հետադետային գնահատումը կարող է նախաձեռնվել ԳՆ-ի կողմից՝ ավելի մեծ աղետների համար, որոնք իրենց ազդեցությունն են թողել առնվազն մի քանի մարզերում: Ավելի փոքր մասշտաբների աղետների դեպքում, ոոնք իրենց ազդեցությունն են թողել մեկ կամ հարևան մարզերում, գործընթացը նախաձեռնում են մարզային իշխանություններն ու համայնքները: Մարզային իշխանությունները տեղեղկացնում են ԳՆ-ին գնահատման վերաբերյալ և հրահանգում են համայնքներին ու տեղական հանձնաժողովներին նախաձեռնել գործողություններ՝ սահմանված մեթոդոլոգիայի համաձայն:

Պարտադիր չէ, որ աղետի էֆեկտներն ու ազդեցությունները գյուղատնտեսության ոլորտի վրա մասշտաբային լինեն կամ էական ազդեցություն ունենան բնակիչների անվտանգության վրա կամ վնասեն սեփականությունը, որպեսզի մարզը կամ համայնքը գնահատման գործընթաց նախաձեռնի, սակայն դրանք պետք է էականորեն ազդեն ոլորտի և գյուղական կենսակերպի վրա, ներառյալ՝ դանդաղորեն գործող աղետները, ինչպիսիք են՝ ձմեռային երաշտները, կարկուտը, գարնանային սառնամանիքն ու մարդկանց չփոխանցվող կենդանական համաճարակները:

Փոքրամասշտաբ աղետները, կրկնվող կամ խրոնիկ բնույթ կրող երևույթները հաճախ արձագանք չեն ստանում կամ չեն փաստագրվում՝ թերագնահատելով աղետի ընդհանուր ռիսկը, էֆեկտներն ու ազդեցությունները տուժած բնակչության վրա և ազգային տնտեսության ընդհանուր կորուստները:

Որպես այդպիսին՝ անգործությունն անխուսափելիորեն հանգեցնում է աղետի պատճառի և ծագման վերաբերյալ ոչ ճշգրիտ եզրակացությունների՝ թերագնահատելով խնդրի ծանրության աստիճանն ու աղետի ռիսկի նվազեցման ու վերականգնման համար կայուն և երկարատև լուծումների անհրաժեշտությունը:

Հաշվի առնելով, որ գյուղատնտեսական աղետները հաճախ չեն համապատասխանում աղետների բարդությանը բնորոշ ցուցանիշներին (օր.՝ վնասների թիվը, ենթակառուցվածքներին հասցված վնասը կամ էական ազդեցությունը տնտեսության վրա), դրանք արտակարգ իրավիճակ հայտարարելու առիթ չեն դառնում: Այսպիսով՝ այս ուղեցույցն առանձին կերպով է դիտարկում գյուղատնտեսության ոլորտում վնասի և կորստի գնահատումը՝ արտակարգ իրավիճակների և արտակարգ իրավիճակների արձագանքելու մեխանիզմների հետ կապված ցանկացած իրավական դրույթներից զատ՝ խրախուսելով մարզերին առավելապես զարգացնել գյուղատնտեսական աղետների դասակարգման համար կանխորոշված չափանիշները՝ արձագանքման մարզային ծրագրերի շրջանակներում:

Գյուղատնտեսական աղետների վնասի և կորստի գնահատման ու աղետին առնչվող օժանդակության տրամադրման հարցում ներդրումների խթանումը պետք է սահմանվի մարզերի կողմից, և, որպես այդպիսին, մարզային իշխանությունները պետք է մշակեն ինստիտուցիոնալ որոշումների կայացումը խթանող մեխանիզմներ, որոնք համահունչ ու զգայուն են մարզային առանձնահատկություններին և անհրաժեշտության դեպքում ինքնաբերաբար կակտիվացնեն աղետի գնահատման և օժանդակության տրամադրման մեխանիզմները:

Գյուղատնտեսական ոլորտի աղետների հետևանքների վերացմանն ուղղված գործողություններ ձեռնարկելու ազդանշանային շեմը բնորոշող ցուցանիշները սամանվում են ելնելով՝

- տուժած գյուղական բնակչության թվից
- համայնքում/մարզում կիրառվող գյուղատնտեսության տեսակից/չափից, արժեքից և դերից
- վնասի նախնական/արագ գնահատման արդյունքներից՝ հիմնված ցուցանիշների հստակ հավաքակազմի վրա

Ցուցանիշների հավաքակազմը ներառում է՝

- Տուժած համայնքների, ֆիզիկական և իրավաբանական անձանց քանակը՝ մարզի ընդհանուր բնակչության, ֆերմերների և համայնքների քանակի վերաբերյալ խաչաձև հղումով (cross refernced)
- Վնասված վարելահողի չափը՝ համեմատած մշակահողերի միջին չափերի և ընդհանուր տարածքի հետ
- Ձեկուցված վնասի և կորստի արժեքը՝ համեմատած գյուղական բնակչության միջին եկամտի հետ և
- Գյուղատնտեսական օրացույցը և արտադրության սեզոնը՝ համեմատած վերականգնման հնարավոր տարբերակների հետ (սերմնացանի ժակետներ, ընթացքի մեջ գտնվող բերքահավաք և այլն)

Գյուղատնտեսական ոլորտում ՀԱԿԳ (հետադետային կարիքների գնահատում) իրականացնելու մասին որոշումը պետք է կայացվի ոչ վաղ, քան աղետի ավարտից մեկ շաբաթ անց: Այնուամենայնիվ, գործողությունների ժամանակացույցը կարող է տարբեր լինել՝ կախված աղետի մասշտաբներից և բնույթից: Կարիքների գնահատումը պետք է ավարտին հասցվի 3-ից 4 շաբաթվա ընթացքում:

Որոշումների վրա հիմնված ազդանշանային մեխանիզմի և ցուցանիշների համար առաջարկությունը ներկայացված է Աղյուսակ 1-ում:

<b>Աղյուսակ 1. Որոշումների վրա հիմնված խթանի մեխանիզմ և ցուցանիշներ</b>		
<b>Չափանիշներ</b>	<b>Շեմ</b>	
Մարզի գյուղատնտեսական ոլորտում ակտիվ բնակչության ավելի քան 1 տոկոսը տեղեկացրել է վնասի և կորստի մասին	Չափանիշերից ցանկացածը համապատասխանում է	Չափանիշներից առնվազն երեքը համապատասխանում են - և/կամ
Ցանկացած համայնքի՝ գյուղատնտեսական ոլորտում ակտիվ բնակչության ավելի քան 10 տոկոսը տեղեկացրել է վնասի և կորստի մասին		
Տեղեկացված վնասների և կորստի արժեքը սահմանվում է գյուղատնտեսական միջին արտադրողի արտադրական կարողությունների շրջանակներում (3 ամսվա միջին եկամուտ)		
Ավելի քան 3 համայնք միաժամանակ տեղեկացրել են վնասի և կորստի մասին		
Գյուղատնտեսական ոլորտի աղետի ծագումն ու պատճառը դուրս է վնաս կրած համայնքի/մարզի հսկողության/իրավասության և մեղմացման կարողությունների շրջանակներից		
Գյուղատնտեսական օրացույցը և տարվա եղանակը վերականգնման տարբերակներ չեն առաջարկում տուժած բնակչությանը	Կարիքների արագ գնահատումը (ԿԱԳ) մատնանշում է աղետին հաջորդող աջակցության անհրաժեշտությունը	
<b>Արդյունք</b>	<b>Կարիքների արագ գնահատում (ԿԱԳ)</b>	<b>Հետադեպային գյուղատնտեսական կարիքների գնահատում</b>

## 2.2. ՀԵՏԱՂԵՏԱՅԻՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Գյուղատնտեսական ոլորտի ՀԱԿԳ-ն նպատակ ունի քանակական արժեքի վերաձև գյուղատնտեսության ոլորտում վնասներն ու կորուստները և վերլուծել աղետի էֆեկտներն ու ազդեցությունները համայնքային, մարզային և պետական մակարդակներում:

Գյուղատնտեսական աղետի «էֆեկտներ» եզրույթը վերաբերում է աղետալի իրադարձության հետևանքներին կամ անմիջական արդյունքին՝ կապված՝

1. բուսաբուծության և անասնաբուծության գյուղատնտեսական արտադրանքի ակտիվների վնասների և կորուստների հետ՝ հիմնված դրանց որակական, քանակական արժեքի և պետական կարգավորումների միջոցով գների սահմանման վրա
2. Աղետի արդյունքում տուժած անձանց (ֆիզիկական և իրավաբանական) և նրանց կորուստների (եկամուտներ) քանակական արժեքի վերաձևման ու պետական կարգավորումների միջոցով գների սահմանման հետ, որը կարող է մեղմացվել, բայց ոչ չեղյալ համարել:

«Ազդեցություններ» եզրույթը վերաբերում է աղետի էֆեկտների արդյունքում առաջացած հետևանքներին (վնասներ և կորուստներ): Ազդեցություններն աղետի առաջացումից հետո դեռևս երկար ժամանակահատված զգալի են մնում (տնտեսական կորուստ, աղքատություն կամ անաշխատունակություն համայնքային, մարզային կամ պետական մակարդակներում), ինչը կարող է

մեղմացվել կամ ինչից կարելի է խուսափել ճիշտ ժամանակին աղետին հաջորդող վերականգնողական պատշաճ աշխատանքների իրականացման շնորհիվ:

Ուղեցույց հանդիսացող այս փաստաթուղթը համադրում է քանակական և որակական առաջնային տվյալների կիրառումը քանակական բազային տեղեկատվության հետ: Այն նպատակ ունի ուղեցույց դառնալ գյուղատնտեսական ոլորտի վրա ազդող ցանկացած մասշտաբի և տեսակի աղետի ՀԱԿԳ-ի համար, անկախ ակտիվների հանդեպ սեփականության իրավունքի կառուցվածքից: Այս առումով ՀԱԿԳ-ի ենթակա կարող են լինել այն ակտիվները, որոնք գրանցված են՝

- Մասնավոր և պետական իրավաբանական անձանց վրա (առևտրային և շահույթ չհետապնդող ընկերություններ, հասարակական ձեռնարկություններ և այլն)
- Տարածքային միավորները (համայնքները, մարզերը և այլն)
- Ֆիզիկական անձինք (ֆիզիկական անհատները)

Փաստաթուղթն ուղեցույց է հանդիսանում հիմնական ազդեցությունների կառավարման համար, որոնց վրա կենտրոնանում է գնահատումը:

### 2.2.1 Վնասներ

Ըստ սույն ուղեցույցի շրջանակների՝ վնասը տեղի է ունենում աղետի ընթացքում կամ դրանից կարճ ժամանակ անց, չնայած որոշ տեղակի վնասներ կարող են ակնհայտ դառնալ միայն աղետից երկար ժամանակ անց: «Վնասը» հանրային և մասնավոր ենթակառուցվածքների և/կամ ֆիզիկական ակտիվների մասնակի կամ ամբողջական ոչնչացումն է՝, թե՛ միավորների քանակի և թե՛ դրանց դրամական արժեքի առումով:

Գյուղատնտեսական վնասների՝ պետական կարգավորումների միջոցով գների սահմանումը վերաբերում է հետևյալների արժեքներին.

1. Մասնակիորեն վնասված ակտիվների **վերանորոգում**, և/կամ
2. Ոչնչացված ակտիվների **փոխարինում**

Վնասները կարող են վերագրվել և հաշվարկվել հետևյալների համար՝

1. **Ենթակառուցվածք** (օր. հասանելի ճանապարհներ, հրդեհային պատնեշներ և պահպանական աշտարակներ, սիլոսի բունկերներ, ֆերմերային տնտեսության ներքին ճանապարհներ, դրենաժային համակարգեր, ոռոգման ջրանցքներ և համակարգեր ու ենթակառուցվածքներ և այլն)
2. **Գյուղատնտեսական շինություններ/հարմարություններ**, ինչպիսիք են՝ սերմերի և սննդամթերքի պահեստները, կենդանիների ապաստարաններ, լճակներ, ձկնաբուծարաններ և տնկարանային միավորներ, պոմպակայաններ, ֆերմերային տնտեսության շինություններ, սառցային գոտում աճող բույսերի հետազոտությունների կամ սերմերի լաբորատորիաներ և այլ կառույցներ, որոնք գործում են որպես ոլորտի մի մաս: Դրանք պետք է գնահատվեն դրանց կիրառման և պահպանման համար պատասխանատու ընկերությունների հետ համաձայնեցման միջոցով՝ ըստ համապատասխանության
3. **Սարքավորումներ և այլ մեքենայացում**. գյուղատնտեսական նպատակներով և կարևոր այլ ակտիվների համար կիրառվող բազմաթիվ հզոր սարքավորումներ են առկա (տրակտորներ, կոմբայններ, մեքենաներ, կոմբինացված կերի աղացներ, սառցարաններ, ոռոգման շարժիչներ, էլեկտրական շարժիչներ, պոմպեր, սերմերի վերամշակման սարքավորումներ, սննդամթերքի վերամշակման և պահպանման սարքավորումներ և այլն)
4. **Գյուղատնտեսական ակտիվներ, նյութեր և պարագաներ** (ոչ ծախսելի), ներառյալ՝ գործիքներ, վանդակներ, ցիստեռններ, ոռոգման փողրակներ և խողովակներ, պահեստամասեր, նավակներ, ցանցեր և այլն

5. Ֆերմերները սովորաբար ունենում են գյուղատնտեսական պաշարներ (ապրանքներ, միջոցներ և նյութեր), ինչպիսիք են հավաքված մշակաբույսերը, սերմերը, պարարտանյութերը, թունաքիմիկատները, անասնաբուժական դեղորայքը, կենդանիների կերային կրաքարը, վառելիքը և այլն
6. **Բազմամյա մշակաբույսեր, որոնք ամբողջովին ոչնչացվել են (պետք է արմատախիլ արվեն):** Ոչնչացված բազմամյա մշակաբույսերը, ինչպիսիք են պտղատու այգիները, խաղողի այգիները և այլն, գնահատվում են ըստ իրենց փոխարինման ծախսերի: Նրանց արտադրությունը համարվում է որպես կորուստ մինչև 3-5 տարի ժամկետով կամ մինչև այն ժամանակը, երբ մշակաբույսերը կրկին ամբողջովին պտղատու դառնան: Այստեղ ներառվում են նաև անտառները և առևտրային շահագործման առկա փայտանյութի տարածքները:
7. **Անկած մթերատու կենդանիներ,** որոնք սատկում են աղետից երկու շաբաթ անց՝ աղետի՝ իրենց բարեկեցության վրա թողած հետագա հետևանքների պատճառով և զոհ գնացած կենդանիներ (բացառությամբ մորթված կենդանիների)
8. Աղետի հետևանքով վնաս կրած **գյուղատնտեսական հողատարածքը** կարող է ոչնչանալ (ողողամաշված, փլուզված, ջրի տակ անցած կամ ջրերի կողմից քշված-տարված) և պետք է հաշվարկվի դրա գնման արժեքով: Հաշվարկի ընթացքում հողատարածքի վերականգման նպատակով բեկորների վերացումը, մաքրումը և այլն նույապես պետք է հաշվի առնել:

### 2.2.2 Կորուստներ

Կորուստները ֆինանսական հոսքի փոփոխություններն են՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն առաջացած աղետի հետևանքով: Այլ կերպ ասած՝ կորուստներն այն ապրանքների և ծառայությունների արժեքն են, որոնք չեն արտադրվել կամ չեն արտադրվի այնքան ժամանակ, մինչև լիովին վերականգնում տեղի չունենա: Կորուստները կարող են զգացվել աղետից ավելի քան մեկ տարի անց և արտահայտվում են ընթացիկ գների դրամական արժեքով: Գյուղատնտեսական կորուստների՝ պետական կարգավորումների միջոցով գների սահմանումը վերաբերում է՝

#### 1. Արտադրական կորուստներ:

- **Ընթացիկ արտադրանքի (արտադրության) և եկամտի (բերքատվության) նվազեցում**  
Աղետի տարում արտադրանքի չիրացված եկամտի շնորհիվ՝ (i) միամյա և բազմամյա մշտական մշակաբույսերի կրճատված արտադրություն, ներառյալ անտառները և (ii) կենդանական ծագման արտադրանքի կորուստներ, ներառյալ ակվակուլտուրան
- **Ապագա արտադրանքի (արտադրության) և եկամտի (բերքատվության) նվազեցում**  
Աղետից հետո արտադրանքի և արտադրողականության քանակական և որակական անկում սեզոնի/տարվա ընթացքում:

#### 2. Բարձր կամ ավելացված արտադրական ծախսեր:

1. **Ավելացված արտադրական ծախսեր՝** շնորհիվ արտադրական և վերականգնողական շրջանում (մինչև 3-5 տարի) պահանջված միջոցների օգտագործման, ինչպես նաև մատակարարման վնասված շրջանների պատճառով՝ մատակարարման ավելի բարձր գներ
2. **Ավելացված արտադրության ծախսերը** ժամանակին կատարված վերատնկման/համարման միջոցով՝ նույն տարվա/սեզոնի ընթացքում դեռևս բերք ունենալու համար:

#### 3. Ապրանքների և ծառայությունների առկայության հետևանքներից առաջացած կորուստներ:

Առաջանում են այն դեպքում, երբ ակնկալվում է, որ աղետի հետևանքները երկար ժամանակ զգալի են լինելու և ազդելու են այն պաշարների քանակի վրա, որոնք հեշտությամբ չեն փոխարինվում: Օրինակ՝ ապրանքների և ծառայությունների՝ աղետի հետևանքով տեղի ունեցած գների բարձրացումը: Դրանք դիտարկվում են մարզային մակարդակով և՛ ֆիզիկական,

և՛ իրավաբանական անձանց համար՝ ազգային միջին գները համեմատելով փաստագրված գնաճի հետ:

Ռազմավարական ռեսուրսներին վնաս հասցնող աղետների դեպքում (օր.՝ ոռոգման մարզային սխեմա, ագրո-արդյունաբերական կամ մատակարարման համալիրներ և այլն), միջոցների և ծառայությունների մատակարարման և առկայության, ինչպես նաև մարզային մակարդակով շուկաների գործառնության հետևանքները գնահատվում և ներառվում են:

#### 4. Կառավարման և սոցիալական գործընթացների հետևանքներից առաջացած կարուստներ

Գնահատումը պետք է նկարագրի աղետի ցանկացած հետևանք ներքոհիշյալների հետ հաղորդակցման կամ փոխազդեցության և գործունեության վրա՝

1. Ինստիտուտներ (նախարարություններ, մարզային իշխանություններ և այլն), ինչը կարող է հանգեցնել գյուղատնտեսական սուբսիդիաների կամ պետական այլ նպաստների ձեռքբերման ձախողման, որոնք սովորաբար ստանում են վնաս կրած անձինք:
2. Համագործակցության վրա հիմնված տարբեր ուղղահայաց (հովանավոր/հաճախորդ) և հորիզոնական ցանցեր (ֆերմերային կազմակերպությունների և ռեսուրսներ մատակարարող ընկերությունների համագործակցություն), ինչպիսիք են շուկայի հասանելիության, պայմանագրային գյուղատնտեսության շուրջ ձեռքբերված պայմանավորվածությունների կորուստը կամ վարկերի և փոխառությունների պահանջների չբավարարումը կամ մարումների բացակայությունը:
3. Ապավինումը ընտանիքի, ազգականների, համայնքային ռեսուրսների վրա, հյուրընկալության ավանդույթները և գոյատևման միջոցների հարցում փոխադարձ օժանդակությունը (ներքին և արտաքին դրամական փոխանցումների անդորրագրեր), հարկադրված շարժունակությունը և այլն:

### 3. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ

#### 3.1 ԱՂԵՏԻՆ ՆԱԽՈՐԴՈՂ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

Աղետի հետևանքով առաջացած վնասի և կորստի գնահատումը պետք է հիմնված լինի այն պայմանների համեմատության վրա, որոնք գնահատվել են աղետից առաջ և հետո: Աղետին նախորդող իրավիճակի վերաբերյալ տեղեկատվությունը ձեռք է բերվում մարզերի կողմից՝ աղետի ազդեցության ամբողջական ծավալը ճշտելու նպատակով. ելակտային իրավիճակը համեմատվում է աղետին հաջորդող պայմանների և իրավիճակների հետ:

Ինչպես նշված է Վնասների գնահատման մեթոդորոշիայիում, ելակետային իրավիճակը գնահատելու համար անհրաժեշտ համապատասխան քանակական տվյալների զգալի մասը հասանելի է ազգային վիճակագրական համակարգում:

Աղետի չափի և շրջանակների վերաբերյալ քննարկման ենթակա հավաքագրված տեղեկատվությունը պետք է ամփոփովի մարզային մակարդակում:

##### 3.1.1 Ապրանքների և ակտիվների արժեքների գնահատումը

Վնասներն ու կորուստները գնահատելու համար տեղին է որոշել վնասված ակտիվների արժեքը՝ հիմնված ստանդարտ բերքատվության, գների և եկամուտների հաշվարկների վրա:

##### 1. Միջին ցուցանիշների վրա հիմնված ստանդարտ արժեքներ:

Շուկայական արժեքը (կենդանիներ, հողատարածք, ներդրված միջոցներ, աշխատանքներ և ծառայություններ) որոշելու աղբյուրների թվին են պատկանում ազգային վիճակագրական տվյալները, շուկայական հաշվետվությունները, առևտրային հաշվետվությունները, քաղվածքները, փորձագետների հաշվետվությունները և այլն: Ստանդարտ արժեքները

սահմանվում են մարզի կողմից՝ հիմնվելով վիճակագրական տվյալներից վերցված 3 տարիների միջին գների վրա: Եթե դրանք չեն արձանագրվել ազգային վիճակագրության կողմից, այդ դեպքում տվյալները տրամադրվում են մանրաձախ շուկայի հետազոտության միջոցով:

- **Ապրանքների համար շուկայական ստանդարտ գները** (գյուղատնտեսական արտադրանք, պահեստավորված գյուղատնտեսական միջոցներ և այլն) մատնանշում են այն գինը, որով ակտիվը կարող է վաճառվել նախատեսված վաճառքի պահին (սակայն՝ ոչ աղետի ընթացքում)
- **Մշակաբույսերի և անասունների ստանդարտ բերքատվություն/մթերատվություն**, վերաբերում է սեզոնային կամ տարեկան բերքատվությանը/մթերատվությանը

2. **Ստանդարտ եկամուտները** վերաբերում են ներկայիս և ապագա կորուստների արժեքների գնահատմանը: Ստանդարտ եկամուտները հիմնականում կարող են վերաբերել արտադրողի՝ տվյալ արտադրությունից ձեռք բերած համախառն և զուտ եկամուտների չափին, որոնք հաշվարկվում են ստանդարտ շուկայական գները ստանդարտ բերքատվությամբ բազմապատկելու միջոցով և փոխակերպվում են ստանդարտ եկամուտների:

Ստանդարտ եկամուտները կարող են նաև հիմնված լինել ստանդարտ արտադրական հաշվարկների վրա՝ ներառելով նախնական ներդրումների արժեքն ու արտադրական տարեկան ծախսերը: Ստանդարտ արտադրական հաշվարկների ձևանմուշները տրամադրվում են Վնասների գնահատման մթողուղգիայում՝ բուսաբուծության և անասնաբուծության համար: Մաթույլ է տալիս ներդրումների ամբողջական շղթա չունեցող մշակաբույսերի պարագայում ստանդարտ եկամուտը կրճատել չիրացված ներդրումների չափով: Այնուամենայնիվ, բնամթերային արտադրության և մանր ֆերմերների պարագայում, որտեղ արտադրողի աշխատուժի (բարձրացված արժեքով) ներդրումը գերազանցում է ներդրված միջոցների ծավալին, պետք է խուսափել ՋՈՒՏ եկամուտների կիրառումից: Նմանատիպ դեպքերի համար կիրառվում է ստանդարտ ՀԱՄԱԽԱՌՆ եկամուտը:

3. **Իրական գներ**

- **Մաշվող սարքավորումների, ենթակառուցվածքների և ակտիվների արժեքի գնահատում:** Իրական արժեքը հիմնված է նոր ակտիվի գնման արժեքի վրա և կարգավորված է մաշվածության գործակցի ու մնացորդային արժեքի միջոցով (ակտիվի՝ որպես ջարդոն արժեքը նվազեցված է): Այն, ինչ մնում է, աղետի հետևանքով առաջացած դրամական կորուստն է:
- **Գյուղատնտեսական կորսված հողերի գները** հիմնված են իրական շուկայական գների վրա, որոնք վերցված են հողերի սեփականագրվմանն առնչվող առկա հաշվետվություններից, կամ հիմնված են վաճառքների և հարկային հաշվարկների կադաստրային գրանցումների վրա:

3.1.2 *Վնաս կրած բնակչությունն ու նրանց կենսապահովման հիմնական գործողությունները*

1. **Սոցիալ-տնտեսական և ֆերմերային բնութագրեր**

Կենսապահովմանն առնչվող տեղեկատվությունը հնարավորություն է ընձեռում տուժած վայրերում կազմել սոցիալ-տնտեսական խմբերի կենսապահովման զարգացման նկարագրեր՝ պորտֆելներ՝ նշելով կենսապահովման հիմնական ակտիվները (ֆինանսական, մարդկային, կրթական, հմտությունների և այլն)՝ սոցիալական (համայնքային կազմակերպություններ, սոցիալական ցանցեր, կոոպերատիվներ և այլն), գյուղատնտեսական (ֆերմերային տնտեսության ճյուղեր/համակարգեր), ինչպես նաև տեղական տնտեսությունները:

Աղյուսակ 2-ը կարող է կիրառվել որպես ուղեցույց՝ պատմողական նկարագրությունների և աղյուսակային ներկայացումների նպատակով տեղեկատվության հավաքագրման համար:

Աղյուսակ 2: Տուժած բնակչության սոցիալ-տնտեսական պարամետրերը				
<b>Ժողովրդագրություն</b>	Սեռ	Տնային տնտեսություններ	Տարիք	Աշխատուժ
<b>Ֆինանսներ</b>	Եկամուտներ	Պարտքեր	Աղքատություն	Խնայողություններ
<b>Զբաղվածություն</b>	Անաշխատունակություն	Զբաղվածության տեսակներ	Աշխատավարձի վճարումների կանոնավորություն	Սեզոնայնություն
<b>Գյուղատնտեսություն</b>	Եկամուտ ստանալու նպատակով աճեցվող մշակաբույսեր	Բնամթերք ստանալու նպատակով աճեցվող մշակաբույսեր	Սեզոնայնություն	Հողօգտագործում
<b>Մուտք դեպի</b>	Ծառայություններ	Շուկաներ	Ֆինանսներ	Ապրանքներ

Այն դեպքերի համար, երբ սոցիալ-տնտեսական կերպավորման համար պահանջվող տեղեկատվությունը պատրաստի կերպով հասանելի չէ, սույն մեթոդոլոգիան նախատեսում է նվազագույն տվյալներով հարցաշար (տե՛ս հավելված 4), որը պետք է հավաքագրվի և ամփոփվի համայնքային ու մարզային մակարդակներում:

- Բերքատվության օրացույցը** շտապ տեղեկատվություն է տրամադրում տնկված մշակաբույսերի տեսակների, ինչպես նաև դրանց աճման փուլերի վերաբերյալ: Բերքատվության օրացույցի մեկ օրինակ ներկայացված է Հավելված 3-ում:
- Մուտք դեպի գյուղատնտեսական ապրանքներ, ծառայություններ և կառավարում** հասկացությունների նկարագրությունը մանրամասն ներկայացնում է ապրանքների և ծառայությունների առաքման համար նախատեսված համակարգերն ու շուկաները և հարակից օղակները՝ ապահովելով բոլոր փոխադարձ կախվածությունների ամփոփ նկարագիրը: Նկարագրել առանցքային ակտիվների հուսալիությունը (ոռոգման ռեգիոնալ սխեմա, ագրո-արդյունաբերական կամ մատակարարման համալիրներ, ֆերմերների վարկավորումների տրամադրում և այլն), որոնք կապված են աղետի՝ մատակարարման և միջոցների ու ծառայությունների հասանալիության վրա ազդող հետևանքների, ինչպես նաև մարզային մակարդակում շուկաների գործունեության հետ:

### 3.1.3 Աղետի նկարագրություն, աղետների գրանցում և աղետի ռիսկի գնահատում

- Աղետի նկարագրությունը** պետք է ավելի շատ մանրամասներ ներկայացնի տուժած տարածքի և աղետի հետևանքների մասին:
- Ռիսկի գնահատումները** պատկերացում են տալիս աղետի ժամանակագրական առաջացման և սրության վերաբերյալ՝ կենտրոնանալով ճկունության վրա (կանխարգելում, մեղմացում, աղետին արձագանքելու և վերականգնման շրջանակներում ավելի պատշաճ կառուցելու պատրաստվածություն)

## 3.2 ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ՝ ԱՂԵՏԻՆ ՀԱԶՈՐԴՈՂ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ոչ վաղ, քան աղետից մեկ շաբաթ անց տուժած համայնքներում վնաս կրած տեղանքներ այցելելու և տուժած անձանց հետ ուղիղ հարցազրույցներ անցկացնելու միջոցով իրականացվում է դաշտային գնահատում՝ երկու շաբաթվա ընթացքում աղետի պատճառած վնասը դիտարկելու նպատակով: Խրախուսվում են քննարկումները շահագրգիռ տարբեր անձանց հետ (ընկերություններ, տեխնիկական ծառայություններ, ծառայություններ մատուցողներ, փորձագետներ և այլն)՝ թե՛ որակական, և՛ թե՛

քանակական բնույթի տեղեկատվություն պարունակող կարծիքների հավաքագրման, վնասի արժեքի սահմանման և վերանորոգման ու վերակառուցման միավոր ծախսերի գնահատման նպատակով:

Վնասի գնահատման խմբերին դաշտային այցելություններ իրականացնելու ժամանակ կարող են աջակցել տեխնիկական փորձագետները (գյուղ. ոլորտի ՀԱԿԳ և ԳԼ-ի հեռակա ուսուցանման մասնագետները):

Մարզային իշխանությունները պատասխանատու են վերահաստատման նպատակ հետապնդող դաշտային այցելություններ իրականացնելու համար՝ համայնքների կողմից տրամադրված տեղեկատվությունը խաչաձև ստուգման ենթարկելու նպատակով:

### 3.2.1 Ֆիզիկական և իրավաբանական անձանց վնասներն ու կորուստները գրանցելու

#### ձևաթղթերը

Տվյալները պետք է հավաքագրվեն և ներկայացվեն համակարգված ձևով, որպեսզի հնարավոր լինի դրանց միջոցով ամփոփ նկարագիր կազմել յուրաքանչյուր ապրանքի փաստացի վնասի և կորուստների վերաբերյալ, ինչպես նաև հետևել, թե ինչպես է տրամադրված յուրաքանչյուր արժեք (գումար) հաշվարկվում: Սույն ուղեցույցն առաջարկում է ձևանմուշներ/ձևաթղթեր, որոնք աջակցում են՝ 1) վնասված ակտիվի արժեքի սահմանմանը, 2) վնասի ծավալների ու վերականգնմանն ուղղված ենթադրվող ծախսերի սահմանմանը, 3) վնասված ակտիվի տեղանքի որոշմանը:

Առկա են երկու հիմնական ձևաթուղթ՝ վնասներն ու կորուստները գրանցելու համար.

1. Վնասի գնահատման ձևաթուղթ (հարմարեցված ըստ վնասված գույքի տեսակի)
2. Արժեքի գնահատման ձևաթուղթ (կիրառվում է տարբեր հաշվարկների ժամանակ և կցված է ՎԳ-ի ձևաթղթին)

### 1. ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԱԹՂԹԵՐ (ՎԳ)

Հավելված 1-ում ներկայացված ՎԳ-ի ձևաթղթերը հիմնված են կանխորոշված և ստանդարտացված հաշվարկների վրա ու միավորում են մեկ միավոր գույքի կորուստներն ու վնասները՝ ներառելով հետևյալ ձևաթղթերը՝

- ՎԳ1 – Ենթակառուցվածք և հող (Վնասներ),
- ՎԳ2 – Գույք և սարքավորումներ (Վնասներ)
- ՎԳ3- Միամյա մշակաբույսեր (Վնասներ և կորուստներ)
- ՎԳ4 – Բազմամյա մշակաբույսեր (Վնասներ և կորուստներ)
- ՎԳ5 – Անասնաբուծություն (Վնասներ և կորուստներ)

## ՎԳ1- ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՀՈՂ

### Վնասներ

Ե

Աղետի հետևանքով առաջացած ընդհանուր վնասի արժեքը հաշվարկվում է ամբողջությամբ և մասնակիորեն ոչնչացված ենթակառուցվածքների ու հողի արժեքները միմյանց գումարելու միջոցով:

**Ենթակառուցվածքներն ու հողը** կարող են ամբողջությամբ ոչնչանալ, երբ ենթակառուցվածքին հասցված վնասը խանգարում է դրա վերականգնմանը կամ վերականգման համար պահանջվող ծախսերն ավելի բարձր են փոխարինման համար պահանջվող ծախսերից. նման դեպքում ենթակառուցվածքը համարվում է ոչնչացված և հաշվարկվում են փոխարինման համար պահանջվող ծախսերը:

Գյուղատնտեսական հողը կարող է ոչնչանալ (օր.՝ ընդմիջտ ջրի տակ անցնել, ողողամաշվել, ջրերի կողմից քշվել կամ մեկընդմիջտ աղտոտվել) և այլևս պիտանի չլինել հողագործության համար:

Բանաձև:

Ա\*Գ

Ոչնչացված ենթակառուցվածքների և հողի փոխարինման համար պահանջվող ծախսերը հաշվարկվում են ամբողջությամբ ոչնչացված ենթակառուցվածքների և հողի միավորների ընդհանուր քանակով և գնահատվում է փոխարինման համար պահանջվող ծախսերի դրամական արժեքը: Արժեքները գնահատվում են՝ հիմնվելով աղետի պահին բնօրինակային գերակա բնութագրերի կամ շուկայական իշխող գների (հողի համար) վրա: Փոխարինման համար պահանջվող ծախսը կարող է նաև ներառել ոչնչացված ենթակառուցվածքը/շինությունը հեռացնելու և դրա փոխարինման նպատակով իրականացվող նախապատրաստական աշխատանքների համար պահանջվող ծախսերը:

Փոխարինման հաշվարկված ծախսը հնարավորության դեպքում պետք է ներառի «ավելի բարձր կերպով վերականգնելու» սկզբունքի (բարելավել որակը, ներմուծել արդիական տեխնոլոգիաներ և նվազեցնել աղետի առաջացման ռիսկերը) կիրառման համար պահանջվող ծախսերը:

Բանաձև:

Բ\*Դ

Ենթակառուցվածքներն ու հողը համարվում են **վնասված/մասնակիորեն ոչնչացված** այն դեպքում, երբ վնասը կարող է վերականգնվել առանց գույքի փոխարինման: Այս դեպքում հաշվարկվում են վերանորոգման համար պահանջվող ծախսերը: Ենթակառուցվածքներին հասցված վնասի (դրա չափի կամ արժեքի մի մասը) չափը սահմանվում է՝ վնասի ծավալների ու դրա հետ կապված վերանորոգման համար պահանջվող ծախսերի մասին ավելի լավ պատկերացում կազմելու նպատակով:

Գյուղատնտեսական հողը կարող է մասնակիորեն վնասվել կամ «վերանորոգում» պահանջել՝ աղետից առաջ եղած որակը և արտադրողականության մակարդակը վերականգնելու նպատակով: Պետք է հաշվի առնվեն հողի վերականգնման համար պահանջվող այնպիսի ծախսերը, ինչպիսիք են բեկորների, հատակային նստվածքազոյացումների հեռացումը, հողի մաքրումը և այլն:

Մասնակիորեն ոչնչացված ենթակառուցվածքներին հասցված վնասը հաշվարկվում է՝ միավորների քանակը վերանորոգման համար պահանջվող միավոր ծախսի հետ բազմապատկելու միջոցով:

Վնասը հաշվարկելու համար կիրառվում է հետևյալ բանաձևը:  $Ե = (Ա * Գ) + (Բ * Դ)$

Վնասների և կորուստների վերաբերյալ որակական և քանակական տվյալներ տրամադրում են համայնքները, մինչդեռ դրանց հետ կապված ծախսերը հաշվարկվում են մարզային մակարդակով՝ աղետից տուժած շահագրգիռ բոլոր համայնքներին ստանդարտացված ծախսեր/արժեքներ ներկայացնելու նպատակով:

Աղյուսակ 3: ՎԳ 2- Վնասի գնահատման ձևաթուղթ՝ Իրեր, ակտիվներ և սարքավորումներ						
Ակտիվ		Հետևանքներ		Ծախսեր		Վնասներ
ՎԳԶ Ակտիվների մուտք #	Միավոր	Ոչնչացված միավորներ/ Հաստատված	Վնասված միավորներ/ Հաստատված	Փոխարինման համար պահանջվող միավոր ծախս	Վերանորոգման համար պահանջվող միավոր ծախս	Վնասներ
	#, կգ, տոննա	#	#	ՀՀ Դրամ	ՀՀ Դրամ	ՀՀ Դրամ
		<b>Ա</b>	<b>Բ</b>	<b>Գ</b>	<b>Դ</b>	<b>Ե</b>
...	...	...	...	...	...	...
<b>Հավելյալ նշումներ և նկարագրություն</b>						

Վնասների գնահատման համայնքային հանձնաժողովը տեղեկատվություն է տրամադրում հետևյալների վերաբերյալ՝

- **Մյուսակ «ակտիվների մուտք» #**՝ ՎԳԶ-ով սահմանված չկրկնվող համարն է, որը միավորում է ԱՀ (Աղետների գնահատման հանձնաժողով) ձևաթղթում և ԱԳ (աղետների գնահատում) ձևաթղթում գնահատված ակտիվներն ու համապատասխան բնութագրումը: Այն ներառվում է, երբ ԱՀ1 և ՎԳ1 ձևերը ներկայացվում են առանձին-առանձին:
- **Մյուսակ «միավոր»**, այն միավորներն են, որոնց միջոցով արտահայտվում է քանակը և որոնց համար հաշվարկվում է վնասի չափը:
- **Նշումներ և նկարագրություն**՝ ընդհանուր տեղեկություններն են ենթակառուցվածքի, կառուցման կամ վնասված հողի տեսակի և աղետի հետևանքների վերաբերյալ: Քանի որ առկա են բազմաթիվ կառույցներ և օբյեկտներ, չափի/հզորության/գործառնայթի մանրամասն նկարագրություն է պահանջվում՝
  - Նկարագրություն. ենթակառուցվածքի կամ հողի տեսակ, տարիք, շինանյութ, տարածք, որակ (հողի համար)
  - Հետևանքի նկարագրություն. վնասված մասեր, վնասի տեսակ, կառուցվածքային վնաս, մաքրում/վերակառուցում/քանդում պահանջող, անվտանգ՝ մուտքի համար և այլն
 Մարզը կարող է սահմանված հարակից վնասների և ծախսերի վերաբերյալ հավելյալ պնդումներ ավելացնել:

- **Մյուսակ (Ա) «Ոչնչացված միավորների քանակը»** ցուցադրում է ոչնչացված ակտիվները: Այն դեպքում, երբ ակտիվների 50 տոկոսից ավելին վնասված է (օրինակ շինության դեպքում), հաշվարկվում են փոխարինման համար պահանջվող ծախսերը. 50 տոկոսից ավելի քիչ վնասված

ակտիվների դեպքում սովորաբար հաշվարկվում են վերանորոգման համար պահանջվող ծախսերը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ կառուցվածքային վնասները չեն խոչընդոտում դրա վերականգնմանը (տոկոս): Կառուցվածքային վնասի գնահատումը կարող է բարդ գործընթաց լինել: Շինարարական աշխատանքներով զբաղվող տեղական կապալառուները, ինժեներներն ու մատակարարները կարող են աջակցել՝ կառույցներին և օբյեկտներին հասցված վնասի ծավալների հաշվարկման և վերանորոգման ու փոխարինման հետ կապված ծախսերի որոշման հարցում: Օբյեկտների դեպքում հաշվի են առնվում ամբողջական չափերը, իսկ ենթակառուցվածքների դեպքում՝ միայն վնասված հատվածները, ինչպիսիք են ճանապարհային ջրանցքները և հողակտորները:

- **Մյունակ (Բ) «Վնասված միավորների քանակը»** նշում է մասնակիորեն վնասված ակտիվները, որոնք կարող են վերանորոգվել ավելի ցածր ծախսերի միջոցով, քան փոխարինման համար հաշվարկված ծախսերն են:

Մարզերում մարզպետարանների «Գյուղատնտեսության և բնապահպանության վարչությունը» (ԳՊՎ) տրամադրում է վնասների և կորուստների հետ կապված ծախսերը, այդ թվում՝

- **Մյունակ (Գ) «Փոխարինման համար պահանջվող միավոր ծախս».** ներառում է ենթակառուցվածքային ակտիվների փոխարինման համար պահանջվող ծախսերը և հաշվարկվում է այն դեպքերում, երբ հողը կամ ենթակառուցվածքը չեն կարող վերականգնվել կամ վերականգնման համար պահանջվող ծախսերը մոտ կամ ավելի բարձր են փոխարինման համար պահանջվող ծախսերից: Հողի դեպքում այն ներառում է նույն տարածքում գտնվող և նույն որակն ունեցող մեկ միավոր հողի դիմաց պահանջվող սակագինը: Փաստացի փոխարինմանն առնչվող բոլոր ծախսերը հաշվարկվում են ԱԳ ձևաթղթում: Եթե ծախսերն ստանդարտացված են, օրինակ՝ կառուցում ըստ մ<sup>2</sup>, դրանք կարող են ցուցադրվել որպես համընդհանուր արժեք, ինչպես ներկայացված է օրինակում:
- **Մյունակ (Դ) Վերանորոգման ծախսը** ակնկալվող այն արժեք է, որն անհրաժեշտ է վնասված մեկ միավոր ենթակառուցվածքը մինչև աղետը եղած կարգավիճակին վերադարձնելու համար: Ենթակառուցվածքի վերանորոգման համար պահանջվող ծախսերը կարող են ներառել ցանկացած գործողություն՝ սկսած վարակազերծումից կամ վերաներկումից մինչև կոնկրետ քանակի միավորների փոխարինում:  
Գյուղատնտեսական հողի դեպքում վերանորոգման համար պահանջվող ծախսերը կներառեն բեկորների ու հատակային նստվածքազոյացումների մաքրումը, անցքերի լցումը, ջրից քշված հողի վերին շերտի փոխադրումն ու տեղաբաշխումը, հողի փոխարինումը և այլն այն դեպքերում, եթե վերանորոգման համար պահանջվող ծախսերի չափը ցածր է փոխարինման համար պահանջվող ծախսերի չափից: Վերանորոգման համար պահանջվող ծախսերը սովորաբար ստանդարտացված չեն և աշխատանքների վերաբերյալ հստակեցումները պետք է թվարկվեն ԱԳ ձևաթղթում:

Ներքոհիշյալ աղյուսակում ցուցադրված զարգացումները ներկայացնում են ենթակառուցվածքային տարբեր տեսակի օբյեկտներին, ինչպես նաև գյուղատնտեսական հողին հասցվող վնասի տեսակները: Ներկայացված օրինակներում փոխարինման և վերանորոգման համար պահանջվող ծախսերն առանձնացված են:

**ՎԳ 1 և ԱԳ – ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ և ՀՈՂ**

ՎԳ 1 – Համայնք								
Լույնականացում			Ակտիվ			Հետևանքներ		
Անուն (Իրավաբանական/ Ֆիզիկական անձ)	Համայնք	Չկրկնվող ID/գրանցում #	ԱԳՀ Ակտիվների մուտք #	Օբյեկտ, հող	Տեսակ, որակ	Միավոր	Ոչնչացված միավորներ/ Հաստատված	Վնասված միավորներ/ Հաստատված
						հա, մ <sup>2</sup> , մ	#	#
Տիգրան Արիյան	Արարատ	23459	1/345	Ախոռ	Փայտե	մ <sup>2</sup>	45	
<b>Մանրամասն նկարագրություն.</b>			2 մ բարձրությամբ, 15 տարվա հնությամբ, KP 3212, երկաթյա տանիքի 80%-ը վնասված է կամ բացակայում է, ձողակառույցների 20% վնասված է, ենթակա չէ վերանորոգման					
Տիգրան Արիյան	Արարատ	23459	1/346	Հող	II դասակարգ	հա	0.54	
<b>Մանրամասն նկարագրություն.</b>			Գետի կողմից քշված-տարված՝ կորսված հող, ներկա պահին գետի ընդլայնված հուն, գրոյական վերականգնում					
Տիգրան Արիյան	Արարատ	23459	1/347	Արոտավայր	Մարգագետին՝ գետի ափին	հա		0.2
<b>Մանրամասն նկարագրություն.</b>			Ոչ պիտանի արոտավայր, չի կարող օգտագործվել, հողակտորների վրա առկա են գետի հատակային նստվածքազույգումներ, որոնք պետք է մաքրել, մոտավորապես 5 մ <sup>3</sup>					
Տիգրան Արիյան	Արարատ	23459	1/348	Բետոնե ջրանցք	Երկրորդային ջրանցք	Մ		26
<b>Մանրամասն նկարագրություն.</b>			Ոռոգման սեղանակերպ ջրանցք՝ 1 մ <sup>2</sup> լայնական հատույթով					

ՎԳ 1 - Մարզ/Փորձագետ		
Ծախսեր		Վնասներ
Մեկ միավորի փոխարինման համար պահանջվող ծախս	Մեկ միավորի վերանորոգման համար պահանջվող ծախս	Վնասներ
ՀՀ Դրամ	ՀՀ Դրամ	ՀՀ Դրամ
Գ	Դ	Ե
<b>76</b>		<b>3420</b>
<b>Հավելյալ նկարագրություն</b>		
7000		3780
<b>Հավելյալ նկարագրություն</b>		
	<b>1222</b>	244.4
<b>Հավելյալ նկարագրություն</b>		
	<b>325</b>	<b>8450</b>
<b>Հավելյալ նկարագրություն</b>		
	Քշված-տարված	

ԱԳ ձևաթղթեր՝ լրացված մարզերի կողմից՝ անհրաժեշտ փորձագետների օժանդակությամբ

Արժեքի գնահատման ձևաթուղթ				
Ակտիվների մուտք #	1/348			
Վերանորոգման համար պահանջվող ծախս: Ոռոգման ջրանցք				
Իր	Միավոր	Միավորների թիվ	Ծախս/միավոր	Ընդհանուր
			ՀՀ Դրամ	ՀՀ Դրամ
Բետոնի մաքրում	մ <sup>3</sup>	10	290	2900
Փայտե տախտակներ	մ <sup>3</sup>	33	32	1056
Բետոն	մ <sup>3</sup>	10	78	780
Աշխատանքների մեքենայացում	Օր	3	405	1215
Աշխատանքների կապալառուներ	Օր	10	250	2500
Ընդհանուր	Մ	26	<b>325</b>	<b>8450</b>

Արժեքի գնահատման ձևաթուղթ				
Ակտիվների մուտք #	1/347			
Վերանորոգման համար պահանջվող ծախս: Արտոսվայր 1-ի մաքրում				
Իր	Միավոր	Միավորների թիվ	Ծախս/միավոր	Ընդհանուր
			ՀՀ Դրամ	ՀՀ Դրամ
Հողի հեռացման մեքենայացում	մ <sup>3</sup>	50	10	500
Մշակում	Հա	1	300	300
Տնկում	Հա	1	422	422
Ընդհանուր	Հա			<b>1222</b>

Արժեքի գնահատման ձևաթուղթ				
Ակտիվների մուտք #	1/345			
Վերանորոգման համար պահանջվող ծախս: Ախոռ				
Իր	Միավոր	Միավորների թիվ	Ծախս/միավոր	Ընդհանուր
			ՀՀ Դրամ	ՀՀ Դրամ
Տեղանքի մաքրում	օր	3	50	150
Թիթեղյա տանիք	մ <sup>3</sup>	45	10	450
Կառուցման աշխատանք	Օր	41	20	820
Փայտե տախտակներ	մ <sup>3</sup>	10	200	2000
Ընդհանուր	մ <sup>2</sup>	45	<b>76</b>	<b>3420</b>

## ՎԳ – 2 ԱԿՏԻՎՆԵՐ (ԱՊՐԱՆՔՆԵՐ ԵՎ ԻՐԵՐ) ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ

### Վնասներ

Ե

Ակտիվների (ապրանքներ և իրեր) և սարքավորումների պարագայում վնաս են կրում այն նյութերը, որոնք կարող են կիրառվել կամ պահեստավորվել: Բերքահավաքի ժամանակ հավաքված արտադրանքը և արտադրված կերը, բերքահավաքի ժամանակ հավաքված անասնակերը, որոնք պահվում են ուղղահայց դիրք զբաղեցնող պահեստահորերում կամ բունկերներում, կամ պարկերի մեջ պահվող անասնակերը, կերային ապրանքները, ինչպիսիք են սոյայից պատրասված սնունդը, անասնակերի պրեմիքսը, աղը, վառելիքը, թունաքիմիկատները, կենդանիների համար նախատեսված դեղորայքը, կենդանիների համար նախատեսված փռոց-գորգերը, սերմերը, ինչպես նաև գյուղատնտեսության մեքենայացումը, գյուղատնտեսական օբյեկտներում չհնտեգրված սարքավորումները, պլաստմասսե ցանցերը, պլաստմասսե շերտերը, սածիլների տնկման համար նախատեսված տարաները և պահեստավորման մեջ գտնվող տնտեսապես կարևոր այլ իրերը կարող են վնասվել կամ ոչնչացվել աղետի արդյունքում և դրանք պետք է ցուցակագրվեն:

Ամբողջովին ոչնչացված ակտիվներ (ապրանքներ և իրեր) հասկացությունը կիրառվում է վնասված ոչ դիմացկուն ակտիվների/իրերի պարագայում, կամ այն դեպքերում, երբ վերանորոգման համար պահանջվող ծախսերն ավելի բարձր են փոխարինման համար պահանջվող ծախսերից. վերջինի պարագայում ակտիվներն ու սարքավորումները համարվում են ոչնչացված և հաշվարկվում են փոխարինման համար պահանջվող ծախսերը:

Բանաձև:

Ա \* Գ

Փոխարինման համար պահանջվող ծախսը հաշվարկվում է՝ հիմնվելով ամբողջությամբ ոչնչացված ակտիվների ընդհանուր քանակի վրա, և գնահատվում է փոխարինման համար անհրաժեշտ ծախսերի դրամական արժեքով: Արժեքները հաշվարկվում են՝ հիմնվելով ակտիվների՝ աղետի պահին ունեցած գերակա բնութագրումների կամ շուկայական իշխող գների (սարքավորումների համար) վրա. հաշվարկն իրականացվում է մաշվածությունը բացատրելու նպատակով:

Բանաձև:

Բ \* Դ

Վնասված կամ մասնակիորեն ոչնչացված ակտիվները և սարքավորումները դիտարկվում են այն դեպքում, երբ վնասված ակտիվներն ու սարքավորումները կարող են վերականգնվել: Վերանորոգման համար պահանջվող ծախսերը պետք է պատշաճ կերպով հաշվարկվեն. պետք է հաշվի առնվեն, օրինակ՝ մասերի փոխարինումը, թարմացումը, մաքրումը և այլն: Վերանորոգման համար պահանջվող ծախսերը հաշվարկվում են՝ միավորների քանակը վերանորոգման համար անհրաժեշտ միջին ծախս/միավորով բազմապատկելու միջոցով:

Գնահատումը ներառում է գյուղատնտեսական նպատակներով կիրառելու համար առանձնացված բոլոր ակտիվներն ու սարքավորումները՝ բացառությամբ տրանսպորտային միջոցների և որոշ դեպքերի համար օգտագործվող այլ գործիքների ու սարքավորումների:

Վնասների հաշվարկման համար կիրառվող բանաձևն է:  $\text{Ե} = (\text{Ա} * \text{Գ}) + (\text{Բ} * \text{Դ})$

Աղյուսակ 4: ՎԳ 2- Վնասի գնահատման ձևաթուղթ – Իրեր, ակտիվներ և սարքավորումներ

Ակտիվ		Հետևանքներ		Ծախսեր		Վնասներ
<b>ԱԳԶ Ակտիվների մուտք #</b>	Միավոր	Ոչնչացված միավորներ/ Հաստատված	Վնասված միավորներ/ Հաստատված	Մեկ միավորի փոխարինման համար պահանջվող ծախս	Մեկ միավորի վերականգնման համար պահանջվող ծախս	Վնասներ
	#, կգ, տոննա	#	#	ՀՀ Դրամ	ՀՀ Դրամ	ՀՀ Դրամ
		<b>Ա</b>	<b>Բ</b>	<b>Գ</b>	<b>Դ</b>	<b>Ե</b>
...	...	...	...	...	...	...

**Հավելյալ նշումներ և նկարագրություն:**

Վնասների և կորուստների վերաբերյալ որակական և քանակական բնույթի տվյալները ներկայացված են համայնքների կողմից տրամադրվող գրանցումների աղյուսակներում, մինչդեռ հարակից ծախսերը/արժեքները հաշվարկվում են մարզային մակարդակում՝ աղետից տուժած շահագրգիռ բոլոր համայնքներին ստանդարտացված ծախսեր/արժեքներ ներկայացնելու նպատակով:

Վնասների գնահատման համայնքային հանձնաժողովը տեղեկատվություն է տրամադրում հետևյալների վերաբերյալ՝

- **Մյուսնակ «Ակտիվների մուտք#»:** ԱԳԶ-ի կողմից սահմանված, չկրկնվող համարն է, որը միավորում է ԱԳՀ և ԱԳ ձևերում գնահատված ակտիվը և համապատասխան բնութագիրն ու ակտիվի տեսակը, օր.՝ եգիպտացորենի սիլոս կամ տեղական արտադրության սերմեր, տրակտոր և այլն:
- **Մյուսնակ «Միավոր»:** Այն միավորներն են, որոնց միջոցով արտահայտվում է քանակը, և որոնց համար հաշվարկվում է վնասը:
- **Նշումներ և նկարագրություն:** Դիտարկումներ տվյալ տեսակի ակտիվի/իրի որակի ու նկարագրության վերաբերյալ և համապատասխան այլ տվյալներ, այդ թվում՝
  - Նկարագրություն: մոդել, մակնիշ, արտադրության տարեթիվ, սնուցման աղբյուր, սերիա #, աշխատանքային ժամեր (եթե կիրառելի է), կիլոմետրաժ, երաշխիք, ապահովագրություն, կիրառություն, և այլն
  - Հետևանքի նկարագրություն: աշխատանքային վիճակ, թերության նկարագրություն, նորոգման ենթակա կամ ոչ ենթակա կարգավիճակ և այլն
 Մարզը կարող է նշանակված հարակից վնասներին և ծախսերին առնչվող հավելյալ պնդումներ ավելացնել:
- **Մյուսնակ (Ա) «Ոչնչացված միավորների քանակը»** նշված է ոչնչացված ակտիվների համար.
- **Մյուսնակ (Բ) «Վնասված միավորների քանակը»** նշված է մասնակիորեն վնասված ակտիվների համար, որոնք կարող են վերանորոգվել ավելի ցածր ծախսերի միջոցով, քան փոխարինման համար հաշվարկված ծախսերն են:

Մարզերում մարզպետարանների «Գյուղատնտեսության և բնապահպանության վարչությունը» (ԳԲՎ) տրամադրում է վնասների և կորուստների հետ կապված ծախսերն, այդ թվում՝

- **Մյունակ (Գ) «Փոխարինման ծախս»:** Թվարկում է ոչնչացված ակտիվը փոխարինելու համար անհրաժեշտ համալիր ծախսերը: Հաշվարկված են փաստացի փոխարինմանն առնչվող բոլոր ծախսերը, ինչպիսիք են, օրինակ, ներմուծման համար պահանջվող ծախսերը, տրանսպորտային ծախսերը և այլն: Նախատեսված արժեքները հիմնվում են շուկայական առկա գների վրա (ապրանքներ), որոնք կարող են արժեզրկման ենթարկվել՝ կախված տվյալ ակտիվի կիրառումից: Եթե իրերի համար պահանջվող ծախսը ստանդարտացված չէ (օրինակ՝ նոր սարքավորման ծախսը կամ սիլոսի քանակությունը), ԱԳ ձևաթղթում պետք է ծախսերի մանրամասն հաշվարկ ներկայացվի (օրինակ՝ 5 տարի առաջ արտադրված տրակտորի համար համապատասխան արժեզրկում պետք է ներկայացվի):
- **Մյունակ (Դ) «Վերանորոգման ծախս»:** Վնասված ակտիվը մինչ ադետը եղած կարգավիճակին վերադարձնելու համար ակնկալվող արժեքն է, որը ներառում է, օրինակ՝ մասերի փոխարինում, սարքավորումների լվացում կամ մաքրում և այլն. կիրառվում է այն դեպքերի համար, երբ վերանորոգման համար պահանջվող ծախսերն ավելի ցածր են, քան փոխարինման համար պահանջվող ծախսերը:  
Վերանորոգման համար պահանջվող ծախսերը սովորաբար ստանդարտացված չեն և ԱԳ ձևում պետք է թվարկվեն աշխատանքների վերաբերյալ հստակեցումներ՝ պարզաբանելու համար, թե վերանորոգման համար պահանջվող ծախսերն ինչպես են հաշվարկվել: Կարևոր է, որ ծախսերը բերվեն միայն զգալիորեն հասկանալի մակարդակի, որպեսզի հնարավոր լինի միավոր ծախսերը հեշտությամբ ստուգել:

Ներքոհիշյալ աղյուսակում ցուցադրված զարգացումները ներկայացնում են տարբեր ակտիվներին և սարքավորումներին պատճառված վնասների հաշվարկման օրինակ: Ներկայացված օրինակներում փոխարինման համար պահանջվող ծախսերը հստակ կերպով առանձնացված են: Հարկ է ուշադրություն դարձնել չափման միավորներին՝ ապահովելով, որ փոխարինման և վերանորոգման համար անհրաժեշտ ծախսերը վերաբերեն թվարկված միավորներին:

2)ՎԳ 2 և ԱԳ – ԻՐԵՐ, ԱԿՏԻՎՆԵՐ և ՄԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ

ՎԳ 1 – Համայնք								
Նույնականացում			Ակտիվ			Հետևանքներ		
Անուն (Իրավաբանական/ Ֆիզիկական անձ)	Համայնք	Չերկնվող ID/գրանցում #	ԱԳՀ Ակտիվների մուտք #	Օբյեկտ, հող	Տեսակ, որակ	Միավոր	Ոչնչացված միավորներ/ Հաստատված	Վնասված միավորներ/ Հաստատված
						հա, մ <sup>2</sup> , մ	# Ա	# Բ
Տիգրան Արիյան	Արարատ	23459	2/212	Տրակտոր	JD45	#	1	
<b>Մանրամասն նկարագրություն.</b>			John Deere, 45 ձիաուժ, 2007 թ. Արտադրություն					
Տիգրան Արիյան	Արարատ	23459	2/345	Ցորենի հատիկ	Հացահատիկի սերմ	Տոննա	2	
<b>Մանրամասն նկարագրություն.</b>			Մշակված, 50% -ը պիտանի չէ կենդանիների կողմից սպառման համար, պետք է թափել, 50%-ը կարող է կրկին օգտագործվել					
Տիգրան Արիյան	Արարատ	23459	2/305	Ջրի պոմպ	Lovara	#	2	
<b>Մանրամասն նկարագրություն.</b>			Չի գործում, աշխատանքի ընթացքում շփման մեջ է մտել ջրի հետ					
Տիգրան Արիյան	Արարատ	23459	2/444	Կաթիլային ոռոգում	Համակարգ	Մ	3000	
<b>Մանրամասն նկարագրություն.</b>			Ամբողջական 0.5 հա համակարգ, 200 մ 225 մ խողովակով, 2000 մ, գոյնները վերանորոգված չեն					

ՎԳ 1 - Մարզ/Փորձագետ		
Ծախսեր		Վնասներ
Մեկ միավորի փոխարինման համար պահանջվող ծախս	Մեկ միավորի վերանորոգման համար պահանջվող ծախս	Վնասներ
ՀՀ Դրամ	ՀՀ Դրամ	ՀՀ Դրամ
Գ	Դ	Ե
7500		<b>7500</b>
<b>Հավելյալ նկարագրություն</b>	Գնման գինը 15 000 ՀՀ Դրամ, արձանագրված մաշվածություն 5%, Ընդհանուր մաշվածություն 50%	
250		500
<b>Հավելյալ նկարագրություն</b>		
	250	500
<b>Հավելյալ նկարագրություն</b>		
<b>3.05</b>		<b>6100</b>
<b>Հավելյալ նկարագրություն</b>		

**ԱԳ ձևեր՝ լրացված մարզերի կողմից՝ համապատասխան փորձագետների  
օժանդակությամբ**

Արժեքի գնահատման ձև				
Ակտիվների մուտք #	2/444			
Վերանորոգման համար պահանջվող ծախս: Lovara պոմպեր				
Իր	Միավոր	# միավոր ներից	Ծախս/միա վոր	Ընդհանուր
			ՀՀ Դրամ	ՀՀ Դրամ
Գնումներ Quinn Jill շարքեր	Մ	2000	2	4000
Գլխավոր HDPE 250	Մ	200	7	1400
Զտիչ RD 332	#	2	200	400
Տրանսպորտ	Միանվագ գումար	1	50	50
Տեղադրում	Օր	1	150	150
Ընդհանուր	Մ	2000	<b>3.05</b>	<b>6100</b>

### ՎԳ-3 ԲԱԶՄԱՄՅԱ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐ (ԾԱՌԵՐ, ԹՓԵՐ, ԱՆՏԱՌՆԵՐ)

#### Վնասներ

**Թ**

Բազմամյա մշակաբույսերը կարող են վնասվել, բայց չոչնչանալ: Վնասի մասին պատկերացում կազմելու համար կարող է ամիսներ պահանջվել:

Բանաձև:

**Ա\*Գ**

**Ամբողջությամբ ոչնչացված ծառերի և թփերի դեպքում**, որոնք չեն կարող վերականգնվել, դիտարկվում են փոխարինման ծախսերը, որոնք հաշվարկվում են վերացած միավորների քանակը փոխարինելու համար պահանջվող միջին ծախսով՝ բազմապատկելու միջոցով (օր.՝ արմատախիլ անելը, նախապատրաստումը, գնումը և փոխարինման համար պահանջվող ծախսը):

Եթե բազմամյա մշակաբույսը ոչնչացվել է մինչև արտադրողականության վերականգնումը, փոխարինման համար պահանջվող ծախսը պետք է ներառվի:

Եթե բազմամյա մշակաբույսի հեռացումը հանգեցնում է մնացորդային արժեքի (օրինակ՝ վառելիքայտ), այն պետք է ընդգրկվի մանրամասն նկարագրության ու ԱԳ ձևում և հանվի վնասի ընդհանուր մասնաբաժնից: Բազմամյա մշակաբույսերը կարող են վնասվել, սակայն աղետից անմիջապես հետո չոչնչացվել: պատճառված վնասի մասին պատկերացում կազմելու համար կարող է ամիսներ պահանջվել:

#### Կորուստներ

**Ժ**

Բազմամյա մշակաբույսերը ոչ միշտ են ամբողջությամբ ոչնչանում և հաճախ միայն մասնակի կորուստ է գրանցվում: Երբեմն վնաս է կրում դաշտի միայն մեկ հատվածը: Որոշակի չափով հասցված վնասը կարող է հանգեցնել որակի անկման և պոտենցիալ բերքատվության նվազման: Բերքատվության կորուստը կամ նվազումը կարող է լինել ընթացիկ տարվա կամ մի քանի տարիների կտրվածքով՝ մինչև դրա վերականգնումը: Նմանատիպ դեպքում բերքատվության կորուստը պետք է քանակական արժեքի վերածել և հղում կատարել այն տարիների քանակին, որոնց դեպքում նվազում է ակնկալվում:

Վնասված մշակաբույսի պարագայում կարող է այլընտրանքային կիրառություն լինել, որը կարող է նվազեցնել, բայց չոչնչացնել մշակաբույսի արժեքը: Այլընտրանքային օգտագործման արդյունքում ստացված արժեքը պետք է հանվի ընդհանուր կորստից:

Բանաձև:

**Բ\*Ե\*Զ**

**Ընթացիկ արտադրության և եկամտի/արժեքի նվազում**՝ աղետի տարվա ընթացքում՝ բերքի և եկամտի/արժեքի քանակական և որակական անկման պատճառով: Այս գնահատումն իրականացվում է աղետի տարվա ընթացքում՝ հաշվի առնելով մինչև աղետը եղած միջին եկամուտ/արժեքը և դրանից հանելով աղետից հետո եղած փաստացի եկամուտ/արժեքը: Վնասված մշակաբույսի դեպքում կարող է այլընտրանքային կիրառություն լինել, որը կարող է նվազեցնել, բայց չոչնչացնել մշակաբույսի արժեքը: Այլընտրանքային օգտագործման արդյունքում ստացված արժեքը պետք է հանվի ընդհանուր կորստից:

Բանաձև :

**Ապագա արտադրության և եկամտի/արժեքի նվազում**՝ աղետի տարվան հաջորդող տարիներին՝ բերքի և եկամտի/արժեքի քանակական և որակական ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

<p><b>Բ*Դ*Ե*Զ + Ա*Գ*Զ</b></p>	<p>կորստի պատճառով: Բերքատվության ակնկալվող կորուստը պետք է քանակական արժեքի վերածել և հղում անել այն տարիների քանակին, որոնց ընթացքում մինչև բերքատվության վերականգնվելը կորուստ է ակնկալվում՝ առավելագույնը մինչև 5 տարվա կտրվածքով: Գնահատումն իրականացվում է՝ հաշվի առնելով մինչև աղետը եղած արտադրողների կողմից առաջարկված միջին եկամուտ/արժեքը: Ծախսերը հաշվարկվում են մասնակիորեն վնասված մշակաբույսերի համար՝ մինչև դրանց վերականգնվելը: Ամբողջովին ոչնչացված մշակաբույսերի համար, որոնց դեպքում անհրաժեշտ է վերատնկում, պետք է հաշվարկվի մինչև արտադրողականության վերականգնումն ընկած տարիների քանակը:</p>
<p><b>Բանաձև :</b></p> <p><b>Բ*Դ*Ե</b></p>	<p><b>Ավելի բարձր կամ ավելացված արտադրական ներդրումներ</b>՝ կապված վերականգնման ժամանակահատվածում պահանջվող ռեսուրսների կիրառման աճի հետ (մինչև 5 տարի). ներառում է, օրինակ, բույսերի պաշտպանության միջոցների և պարարտանյութերի հավելյալ քանակ, ոռոգում, հավելյալ խնամք և այլն:</p>

Վնասները հաշվարկելու համար կիրառվող բանաձևն է՝ **Թ** = (Ա\*Գ), իսկ կորուստները հաշվարկելու համար կիրառվող բանաձևը՝

$$\text{Ժ} = (\text{Բ*Դ*Ե*Զ}) + (\text{Ա*Գ*Զ}) + (\text{Բ*Դ*Ե}) + (\text{Բ*Ե*Զ})$$

Վնասներն ու կորուստները հաշվարկելիս պետք է բացառել բազմամյա այն մշակաբույսերը, որոնք աճում են 500մ<sup>2</sup> (0.05 հա)-ից ավելի փոքր տարածք զբաղեցնող տնամերձ հողամասերում կամ բուստաններում: Տնամերձ հողամասերում աճող մշակաբույսերը պետք է դիտարկվեն միայն այն դեպքում, երբ դրանք բարձրարժեք են և զգալիորեն նպաստում են տնային տնտեսությունների եկամտի աճին կամ սննդի անվտանգությանը, օրինակ՝ հատապտղային տնկարկներ, պատվաստանյութեր և այլն:

Աղյուսակ 5-ը ներկայացնում է վնասներն ու կորուստներն ամփոփելու համար օգտագործվող ՎԳ3 ձևը

Աղյուսակ 5: ՎԳ3 Վնասի գնահատման ձև- Բազմամյա մշակաբույսեր											
Մշակաբույս		Հետևանքներ					Ծախսեր			Վնաս և կորուստ	
ԱԳԶ Ակտի վների մուտք #	Միավոր	Ոչնչացված միավորներ (պետք է վերատնկվեն)	Վնասված միավորներ՝ նվազած բերքատվությամբ	Տարիների քանակը մինչև վերատնկված մշակաբույսերի՝ արտադրողական դառնալը	Տարիների քանակը՝ մինչև բերքատվության վերականգնվելը	Բերքատվության/եկամտի նվազման չափը	Տարեկան կայուն եկամուտ/միավոր	Փոխարինման համար պահանջվող ծախս /միավոր (վերատնկում)	Վերականգնման համար պահանջվող ծախսեր/ միավոր / տարի	Վնաս	Կորուստ
	արմատ, հա	#	#	#	#	%	ՀՀ Դրամ	ՀՀ Դրամ	ՀՀ Դրամ	ՀՀ Դրամ	ՀՀ Դրամ
		<b>Ա</b>	<b>Բ</b>	<b>Գ</b>	<b>Դ</b>	<b>Ե</b>	<b>Զ</b>	<b>Է</b>	<b>Ը</b>	<b>Թ</b>	<b>Ճ</b>
...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...

Հավելյալ նշումներ և նկարագրություն: ...

Վնասների և կորուստների վերաբերյալ որակական և քանակական բնույթի տվյալները ներկայացված են համայնքների կողմից տրամադրված գրանցումների աղյուսակներում, մինչդեռ հարակից ծախսերը/արժեքները հաշվարկվում են մարզային մակարդակում՝ աղետից տուժած շահագրգիռ բոլոր համայնքներին ստանդարտացված ծախսեր/արժեքներ ներկայացնելու նպատակով:

Վնասների գնահատման համայնքային հանձնաժողովը տեղեկատվություն է տրամադրում հետևյալների վերաբերյալ:

- **Մյուսակ «Ակտիվների մուք #»:** Համայնքի կողմից նշանակված չկրկնվող համարն է, որը գնահատված ակտիվը կապում է նույնականացման տեղեկատվության, համապատասխան նկարագրության ու համապատասխան ԱԳ ձևի հետ:
- **Մյուսակ «Միավոր»:** Այն միավորներն են, որոնց միջոցով արտահայտվում է քանակը, և որոնց համար հաշվարկվում է վնասը:
- **Նշումներ և նկարագրություն:** Մանրամասն նկարագրությունն ընդհանուր տեղեկություններ է տրամադրում վնասված բազմամյա մշակաբույսերի և աղետի հետևանքների վերաբերյալ: Այն ցույց է տալիս է, թե արդյոք տնկման խտությունը և սորտերը շատ թե քիչ արդյունավետ են, և նշում է միջին/կանխորոշված արժեքները, որոնք կարող են օգտագործվել որպես կայուն գներ/եկամուտներ/բերքատվություն: Մշակաբույսերին պատճառված վնասների ու դրանց կարգավիճակի, ինչպես նաև վնասների ու կորուստների վերաբերյալ տեղեկատվությունը ներառում է՝
  - Նկարագրություն՝ տարիք, սորտ, տնկման խտություն, բերքատվություն և այլն
  - Հետևանքի նկարագրություն՝ վատթարացած որակ, նվազած արտադրողականություն, ջարդված և վնասված մասեր, վնասված օժանդակ կառույց, ի հայտ եկած վնասատուներ ու հիվանդություններ, որոնք պետք է վերացնել, և այլն:

Մարզը կարող է նշանակված հարակից վնասներին և ծախսերին առնչվող հավելյալ պնդումներն ավելացնել:

- **Մյուսակ (Ա) Նույն դասի, տարիքի պատկանող և նույն արտադրողականությունն ունեցող բազմամյա մշակաբույսերի՝ (որոնք պետք է արմատախիլ արվեն) անհետացած միավորների քանակը:**
- **Մյուսակ (Բ) Կրճատված բերքատվությամբ վնասված միավորների քանակը,** որոնք պետք է վերականգնվեն: Հետևանքի տեսակի, բերքատվության նվազման, ինչպես նաև պահանջվող վերականգնիչ գործողությունների վերաբերյալ տեղեկատվություն պետք է ներկայացվի նկարագրությունների համար նախատեսված շարքում:
- **Մյուսակ (Գ) Պահանջվող տարիների քանակը՝ մինչև ոչնչացված և վերատնկված մշակաբույսը վերականգնվի,** այսինքն՝ մինչև փոխարինված մշակաբույսը բերքատու դառնա:
- **Մյուսակ (Դ) Պահանջվող տարիների քանակը՝ մինչև վնասված մշակաբույսերը վերականգնեն իրենց բերքատվությունը,** այսինքն՝ դեռ որքան ժամանակ պետք է շարունակվի բերքատվության նվազումը:
- **Մյուսակ (Ե) Եկամտի կրճատման չափը՝** հիմնված նվազած բերքատվության վրա և հաշվարկված ինչպես մշտական մշակաբույսերի, այնպես էլ տարիների այն սահմանված քանակի համար, որոնց ընթացքում կրճատում է ակնկալվում: Եթե եկամտի կրճատում ակնկալվում է ավելի քան մեկ տարի ժամկետով, եկամտի կրճատման չափը հաշվարկվում է բոլոր տարիներին տեղի ունեցած կրճատման միջին արժեքով, օրինակ՝ եթե առաջին տարվա

ընթացքում կրճատումը 50 տոկոս է կազմել, երկրորդ տարվա ընթացքում՝ 30 տոկոս, ապա որպես կրճատման չափ մուտքագրվում է 40 տոկոսը ( $50+30/2=40\%$ ):

Մարզերում մարզպետարանների «Գուղատնտեսության և բնապահպանության վարչությունը» (ԳՊՎ) տրամադրում է վնասների և կորուստների հետ կապված ծախսերն, այդ թվում՝

- **Մյունակ (Զ)** Արտադրության մեկ տարվա ընթացքում **վնասված մեկ միավոր մշակաբույսի համար աղետին նախորդող շրջանում արտադրողների կողմից սահմանված տարեկան կայուն միջին եկամուտը**՝ ներկայացված որպես դրամական արժեք և հիմնված շուկայական իշխող գների կամ նախորդ տարիների վիճակագրական տվյալների վրա: Մեկ միավորի կայուն տարեկան եկամուտ/արժեքն օգտագործվում է՝ հաշվարկելու արտադրության կրճատման պատճառով առաջացած կորուստները և կարող է կիրառվել աղետին հաջորդող բոլոր տարիների համար մինչև ամբողջական վերականգնումը, կամ առավելագույնը հինգ տարի ժամկետով: Արժեքը կարող է ներկայացվել մարզերի կողմից տրամադրվող կայուն եկամուտների ձևով կամ հաշվարկվել համայնքային մակարդակում՝ արտադրության համար պահանջվող ծախսերը հաշվարկելու նպատակով տրամադրված ձևանմուշների միջոցով. մարզային իշխանությունները կարող են ըստ անհրաժեշտության փոփոխել այն՝ արտադրության ինտենսիվությունից և այդ ամենի հաշվարկը պետք է ներկայացվի ԱԳ ձևում:
- **Մյունակ (Է) Փոխարինման համար պահանջվող ծախսը** ներառում է վերացած բազմամյա մշակաբույսերի փոխարինման արժեքը: Եթե գրանցվել է ամբողջական կորուստ, օրինակ՝ պտղատու այգու դեպքում, կարող է հաշվարկվել պտղատու այգին կրկին հիմնելու հետ կապված մեկ միավորի համար պահանջվող կայուն ծախսը: Նույն կամ նմանատիպ տեսակի մշակաբույսի մեկ միավորի փոխարինման համար պահանջվող համախառն համալիր ծախսը որպես այդպիսին հաշվարկվում է, եթե տնկիները հասանալի չեն տեղական շուկայում և պետք է ներմուծվեն, տեղափոխվեն և կարանտինի ենթարկվեն, ներառյալ, օրինակ՝ վերացած մշակաբույսը արամատախիլ անելը, հողի նախապատրաստումը, գնումը և աշխատանքները, ինչպես նաև տրանսպորտը, հավաստագրերը և այլն: Եթե փոխարինված մշակաբույսը բազմացնելու համար անհրաժեշտ նյութը պետք է ներմուծվի, այդ դեպքում նույնպես կարող է հաշվարկ իրականացվել և ներկայացվել ԱԳ ձևում:
- **Մյունակ (Ը) Վերականգնման համար պահանջվող ծախսն** ավելի բարձր արտադրական ծախսերի մի մասն է կազմում: Այն մեկ միավոր մշակաբույսի վերականգնման համար պահանջվող ծախսն է՝ համաձայն բազմամյա մշակաբույսերի վրա աղետի թողած հետևանքների նկարագրության: Վերականգնման համար պահանջվող ծախսերը հնարավորություն են տալիս հաշվարկել հավելյալ ներդրումները, որոնք անհրաժեշտ են վնասված մշակաբույսի արտադրողականության վերականգնման համար: Դրանք կարող են ներառել բոլոր այն ներդրումները, որոնք չէին իրականացվի, եթե աղետը տեղի չունենար: Վերականգնման համար պահանջվող ծախսերը հաշվարկվում են աղետին հաջորդող առավելագույնը հինգ տարիների կտրվածքով: Վերականգնմանն առնչվող բոլոր ծախսերը հաշվարկվում են ԱԳ ձևում:

Ներքոհիշյալ աղյուսակում ներկայացված զարգացումները ներկայացնում են բազմամյա մշակաբույսերի տարբեր վնասների և կորուստների հաշվարկման օրինակ: Վնասի/կորստի յուրաքանչյուր դասակարգը ներկայացված է առանձին շարքում, մինչդեռ վերջին շարքը վնասների և կորուստների համատեղ հաշվարկի ամփոփումն է՝ օգտագործելով ներկայացված բանաձևերը:

**ՎԳ 3 ԵՎ ԱԳ – ԲԱԶՄԱՄՅԱ ՄՇԱԿԱԲՈՒՅՄԵՐ**

<b>ՎԳ 3 – Հանայնք</b>											
<b>Նույնականացում</b>			<b>Ակտիվ</b>				<b>Հետևանքներ</b>				
Անուն (Երավաբանական/ Ֆիզիկական անձ)	Հանայնք	Չկրկնվող ID/Գրանցում #	Ակտիվների մուտք #	Մշակաբույս	Տեսակ, սորտ, կիրառություն	Միավոր	Ոչնչացված միավորներ, արմատախիլ արված (պետք է վերատնկել)	Վնասված միավորներ՝ նվազած բերքատվությամբ	Տարիների քանակը՝ մինչև ոչնչացված/ վերատնկված միավորների արտադրողականության վերականգնումը	Տարիների քանակը՝ մինչև վնասված միավորները վերականգնեն իրենց բերքատվությունը	Վնասված միավորների բերքատվության/եկամտի նվազման մասնաբաժինը
						հա, արմատ	#	#	#	#	%
							Ա	Բ	Գ	Դ	Ե
Տիգրան Արիյան	Արարատ	23459	3/334	Խաղողի այգի	Կարդինալ		4.5		4		
<b>Մանրամասն նկարագրություն.</b>			Սահմանափակ վնաս՝ հասցված ջրերի կողմից չքշված մասերին. վերականգնման համար անհրաժեշտ է երկու տարի շարունակ վերականգնիչ աշխատանքներ իրականացնել								
Տիգրան Արիյան	Արարատ	23459	3/887	Խնձորներ	Գոլդեն	հա		1		0	20%
<b>Մանրամասն նկարագրություն.</b>			Կոտրված ճյուղեր, որի արդյունքում նվազել է բերքատվությունը. վերականգնիչ ոչ մի հավելյալ աշխատանք չի պահանջվում								
Տիգրան Արիյան	Արարատ	23459	3/556	Ծիրան	Թագուհի	հա		1.5		2	50%
<b>Մանրամասն նկարագրություն.</b>			Վնասված երաշտի արդյունքում. նվազած բերքատվություն								
Տիգրան Արիյան	Արարատ	23459	3/333	Խաղողի այգի	Կարդինալ	հա	0.3	0.2	4	2	30%
<b>Մանրամասն նկարագրություն.</b>			Հեղեղված խաղողի այգի, ջուրը մնացել է 3 շաբաթ շարունակ: Մի մասը չորացել է, մի մասը կարող է վերականգնվել. առկա է սնկային հիվանդությունների բարձր ռիսկ, պահանջվում է շարունակական բուժում								

Ծախսեր			Վնաս և կորուստ	
Կայուն տարեկան եկամուտ/միավոր	Վերատնկման ծախս /միավոր	Վերականգնման ծախսեր/ միավոր/ տարի	Վնաս	Կորուստ
ՀՀ Դրամ	ՀՀ Դրամ	ՀՀ Դրամ	ՀՀ Դրամ	ՀՀ Դրամ
Զ	Է	Ը	Թ	Ճ
12000	12900		58050	216000
Հավելյալ նկարագրություն				
18000		2840	0	3600
Հավելյալ նկարագրություն				
16800			0	37800
Հավելյալ նկարագրություն				
12000	20000	480	6000	16752
Հավելյալ նկարագրություն				

ԱԳ ձևեր՝ լրացված մարզերի կողմից՝ պահանջվող փորձագետների աջակցությամբ

Արժեքի գնահատման ձև				
Ակտիվների մուտք #	3/887			
Վերականգնման համար պահանջվող ծախսեր				
Միավոր	Միավոր	# միավորներից	Ծախս/միավոր	Ընդհանուր
		#	ՀՀ Դրամ	ՀՀ Դրամ
Թունաքիմիկատներ	կգ	120	12	1440
Պարարտանյութ	տ	4	350	1400
Ընդհանուր	հա	1		<b>2840</b>

Արժեքի գնահատման ձև				
Ակտիվների մուտք #	3/556			
Կայուն տարեկան եկամուտ/միավոր				
Միավոր	Միավոր	# միավորներից	Ծախս/միավոր	Ընդհանուր
		#	ՀՀ Դրամ	ՀՀ Դրամ
Ծիրան I դաս	Կգ	12000	1	12000
Ծիրան II դաս	Կգ	6000	0.8	4800
Ընդհանուր	Կգ/հա			<b>16800</b>

Արժեքի գնահատման ձև				
Ակտիվների մուտք #	3/334			
Խաղողի այգու վերատնկման համար պահանջվող ծախս/միավոր				
Միավոր	Միավոր	# միավորներից	Ծախս/միավոր	Ընդհանուր
		#	ՀՀ Դրամ	ՀՀ Դրամ
Ծառերի արմատախիլ անելը	հա	1	1700	1700
Նորատունկ ծառեր	հա	1	10000	10000
Տնկում	օր	15	80	1200
Ընդհանուր	հա	1		<b>12900</b>

## ՎԳ4 – ՄԻԱՄՅԱ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐ

### Կորուստներ

**Ի**

Միամյա մշակաբույսերը կարող են ամբողջությամբ վերանալ կամ ոչ ամբողջությամբ ոչնչացվել. միամյա մշակաբույսերի դեպքում հաճախ միայն մասնակի կորուստ է լինում: Երբեմն վնաս է կրում դաշտի միայն մեկ հատվածը, և վնասը կարող է հանգեցնել որակի անկման և պտտենցիալ բերքատվության նվազման: Պատճառված վնասից հետո վնասված մշակաբույսը կարող է այլընտրանքային նպատակով կիրառվել, ինչը կարող է նվազեցնել, բայց չոչնչացնել մշակաբույսի արժեքը: Այլընտրանքային կիրառման արդյունքում ստացված արժեքը պետք է հանվի ընդհանուր կորուստի չափից:

Բանաձև:

**Մ\*Ե + Բ\*Դ\*Ե**

**Ընթացիկ արտադրության և եկամտի/արժեքի նվազում՝** աղետի տարվա ընթացքում բերքի և եկամուտ/արժեքի քանակական և որակական անկման պատճառով: **ՎԳ4 բանաձև** Այս հաշվարկը կատարվում է՝ արտադրողների կողմից աղետից առաջ առաջարկվող միջին եկամուտ/արժեքից հանելով աղետից հետո եղած փաստացի եկամուտ/արժեքը՝ միայն այն սեզոնի համար, որի ընթացքում աղետը տեղի է ունեցել:

Բանաձև:

**Բ\*Ը +**

**Եթե Գ = այո, Մ\*Զ-Է**

**Ավելի բարձր կամ ավելացված արտադրական ներդրումներ՝** կապված վերականգնման ընթացքում պահանջվող ռեսուրսների կիրառման աճի հետ, այդ թվում, օրինակ, բույսերի պաշտպանության միջոցների և պարարտանյութերի հավելյալ քանակություն, ոռոգում, հավելյալ խնամք և այլն:

**Վերատնկման համար պահանջվող ներդրումները** ներառում են վեգետացիոն վաղ փուլում գտնվող այն մշակաբույսերի վերատնկումը, որոնք նույն սեզոնի ընթացքում կարող են փոխարինվել: Վերատնկման համար պահանջվող ծախսերը հաշվարկվում են վերացած միավորների քանակը վերատնկման համար պահանջվող միջին ծախսով բազմապատկելու միջոցով (օր.՝ հողի նախապատրաստման, գնման և վերատնկման համար պահանջվող ծախսեր):

Կորուստները հաշվարկելու համար կիրառվող բանաձևն է՝ **Թ = (Մ\*Ե)+(Բ\*Դ\*Ե)+(Բ\*Ը)+ Եթե (Գ= “այո”, Մ\*Զ-Է\*Ա))**

Վնասներն ու կորուստները հաշվարկելիս պետք է բացառել այն միամյա մշակաբույսերը, որոնք աճում են 500մ<sup>2</sup> (0.05 հա)-ից ավելի փոքր տարածք զբաղեցնող տնամերձ հողամասերում կամ բոստաններում: Տնամերձ հողամասերում աճող մշակաբույսերը պետք է հաշվի առնվեն միայն այն դեպքում, երբ դրանք բարձրարժեք են և զգալիորեն նպաստում են տնային տնտեսությունների եկամտի աճին կամ սննդի անվտանգությանը, օրինակ՝ հատապտղային տնկարկներ, պատվաստանյութեր և այլն:

Աղյուսակ 6-ում ներկայացված ՎԳ4 ձևը կիրառվում է կորուստներն ամփոփելու նպատակով

**Աղյուսակ 6: Վնասի գնահատման ձև – Միամյա մշակաբույսեր**

Նույնականացում	Հետևանքներ	Ծախսեր	Կորուստ
ում			

ՎԳԶ Ակտիվների մուտք #	Միավորներ	Ամվողություն		Նվազած բերքատվությամբ -աճով	Վերատնկման հավանականություն	Նվազման արժինը	Տարեկան կայուն եկամուտ/միավոր	Վերատնկման, փոխարինման համար պահանջվող ծախս/միավոր	Վերատնկումից ստացված եկամուտ/բերքատվություն/միավոր	Վերականգնման համար պահանջվող ծախս/միավոր	Կորուստ							
		#	#									Այո	%	ՀՀ Դրամ	ՀՀ Դրամ	ՀՀ Դրամ	ՀՀ Դրամ	ՀՀ Դրամ
		Ա	Բ									Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ
<b>Հավելյալ նշումներ և նկարագրություն:</b>																		

Վնասների և կորուստների վերաբերյալ որակական և քանակական բնույթի տվյալները ներկայացված են համայնքների կողմից տրամադրվող գրանցումների աղյուսակներում, մինչդեռ հարակից ծախսերը/արժեքները հաշվարկվում են մարզային մակարդակում՝ աղետից տուժած շահագրգիռ բոլոր համայնքներին ստանդարտացված ծախսեր/արժեքներ ներկայացնելու նպատակով:

Վնասների գնահատման համայնքային հանձնաժողովը տեղեկատվություն է տրամադրում հետևյալների վերաբերյալ:

- **Մյուսակ «Ակտիվների մուտք #»:** Համայնքի կողմից սահմանված, չկրկնվող համարն է, որը գնահատված ակտիվը միավորում է նույնականացման տեղեկատվության, համապատասխան նկարագրության ու համապատասխան ԱԳ ձևի հետ:
- **Մյուսակ «Միավոր»:** Այն միավորներն են, որոնց միջոցով արտահայտվում է քանակը, և որոնց համար հաշվարկվում է վնասը:
- **Նշումներ և նկարագրություն:** Վնասների գնահատման համայնքային հանձնաժողովը ընդհանուր տեղեկություններ է տրամադրում վնասված մշակաբույսերի և աղետի հետևանքների վերաբերյալ: Մշակաբույսերին պատճառված վնասները ու դրանց կարգավիճակը, ինչպես նաև վնասներն ու կորուստները բնութագրող տեղեկատվությունը պետք է հնարավորինս մանրամասն տվյալներ պարունակի և լավագույնս ներառի՝
  - Նկարագրություն՝ տարիք, սորտ, տնկման խտություն, բերքատվություն և այլն
  - Հետևանքի նկարագրություն՝ նվազած որակ և արտադրողականություն, ջարդված և վնասված մասեր, վնասված օժանդակ կառույց, մաքրման անհրաժեշտություն, վնասատուների և հիվանդությունների առկայություն և այլն:

Մարզային համապատասխան կառույցը կարող է բացահայտված հարակից վնասներին և ծախսերին առնչվող հավելյալ պնդումներ ավելացնել:

- **Մյուսակ (Ա)** Նույն դասակարգին պատկանող և նույն արտադրողականությունն ունեցող մշակաբույսերի քանակը, որոնք ամբողջությամբ վերացել են կամ այն մշակաբույսերի քանակը, որոնք վերացել են բերքահավաքին պատրաստ ժամանակ կամ իրենց վեգետացիոն շրջանում. այս պյունակում ընդգրկված մշակաբույսերի քանակը մշտապես հաշվարկվում է որպես 100 տոկոսանոց կորուստ:
- **Մյուսակ (Բ)** Հաստատում առ այն, թե արդյոք հնարավոր է նույն սեզոնի ընթացքում վերատնկում իրականացնել՝ նույն կամ տարբեր մշակաբույսեր օգտագործելու միջոցով (պետք է բացատրություն ավելացնել նկարագրության մեջ) (այո/ոչ):

- **Մյունակ (Գ) Վեգետացիոն փուլում նվազած բերքատվությամբ վնասված միավորների քանակը** (ակնկալվում է վերականգնում): Աղետի հետևանքների և բերքատվության նվազման, ինչպես նաև վերականգնիչ գործողությունների վերաբերյալ հավելյալ տեղեկատվություն կարող է տրամադրվել նկարագրությունների համար նախատեսված շարքում:
- **Մյունակ (Դ) Բերքատվության նվազման մասնաբաժինը՝** հաշվարկված միամյա մշակաբույսերի համար:
- **Մյունակ (Ե) Կայուն եկամուտը** աղետից առաջ արտադրողների կողմից սահմանված վնասված մշակաբույսերի մեկ միավորի դիմաց ստացվող միջին տարեկան եկամուտն է՝ ցուցադրված որպես դրամական արժեք և հիմնված շուկայական իշխող գների կամ նախկին տարիների վիճակագրական տվյալների վրա: Տարեկան կայուն եկամուտն օգտագործվում է՝ հաշվարկելու նվազման արդյունքում արտադրության և եկամտի՝ աղետի տարված ընթացքում գրանցած կորուստները, ինչպես նաև հաշվարկելու ապագա կորուստները: Այն հաշվարկվում է՝ օգտագործելով Գյուղատնտեսության նախարարության կողմից ընդունված մեթոդիկայայում ներկայացված կայուն արտադրության ծախսեր/օգուտները, այն դեպքում, եթե վերջինները տրամադրված չեն ԱԳ ձևերում:

Մարզերում մարզպետարանների «Գյուղատնտեսության և բնապահպանության վարչությունը» (ԳԲՎ) տրամադրում է վնասների և կորուստների հետ կապված ծախսերն, այդ թվում՝

- **Մյունակ (Զ) Վերատնկման համար պահանջվող ծախսեր.** Նույն կամ նմանատիպ տեսակի և տրտի մշակաբույսերի մեկ միավորի փոխարինման համար պահանջվող համախառն համալիր ծախսը, ներառյալ՝ հողի նախապատրաստումը, գնումը և աշխատանքները, և նույն կամ տարբեր մշակաբույսի կիրառման միջոցով փաստացի վերատնկման արժեքը: Այն ներառում է ԱԳ ձևում ներկայացված վերատնկմանն առնչվող բոլոր ծախսերը:
- **Մյունակ (Է) Մեկ միավորի վերատնկման արդյունքում ստացված եկամուտն** ապահովում է արտադրողների կողմից սահմանված եկամտի/արժեքի վերադարձ՝ մշակաբույսի վերատնկման շնորհիվ, անկախ այն բանից, թե արդյոք վերատնկումը նույն սեզոնի ընթացքում կատարվել է նույն, թե տարբեր մշակաբույսեր օգտագործելու միջոցով: Վերատնկման համար պահանջված ծախսը հանվում է վնասների և կորուստների արժեքից: Վերատնկման համար պահանջված ծախսի հաշվարկը կարող է հիմնվել կայուն եկամտի կամ արտադրության հաշվարկների վրա այն դեպքում, եթե դա նախատեսված է պետական մակարդակով կամ հաշվարկված է ԱԳ ձևաթղթում:
- **Մյունակ (Ը) Վերականգնման համար պահանջվող ծախսեր.** Մեկ միավոր մշակաբույսի վերականգնմանն առնչվող ծախսերը՝ համաձայն մշակաբույսի վրա աղետի ունեցած հետևանքների նկարագրության: Դրանք հանգեցնում են ավելի բարձր արտադրական ծախսերի և թույլ են տալիս գնահատել վնասված մշակաբույսերի արտադրողականության վերականգնման համար անհրաժեշտ հավելյալ ներդրումները: Կարող են ներառվել հավելյալ բոլոր այն ներդրումները, որոնք չեն իրականացվի, եթե աղետը տեղի չունենար: Վերականգնման համար պահանջվող ծախսերը հաշվարկվում են այն տարվա համար, որի ընթացքում տեղի է ունեցել աղետը և թվարկվում են ԱԳ ձևի մեջ:

**ՎԳ4 ԵՎ ԱԳ – ՄԻԱՄՅԱ ՄՇԱԿԱԲՈՒՑՄԵՐ**

ՎԳ 3 – ՀԱՄԱՅՆՔ										
Նույնականացում			Ակտիվ				Հետևանքներ			
Անուն (Իրավաբան ական/Ֆիզիկական անձ)	Համայնք	Չկրկն վող ID/Գրանցում #	ԱԳԶ Ակտիվների մուտք #	Մշակաբույս	Տեսակ, Մորտ, Կիրառություն	Միավոր	Ոչնչացված միավորներ	Վնասված միավորներ՝ նվազած բերքատվությամբ - վեգետացիայով	Արդյո՞ք հնարավոր է վերատնկում իրականացնել (վնասված միավորներ) (այո/ոչ)	Եկամտի նվազման մասնաբաժինը (վնասված միավորներ)
Տիգրան Արիյան	Արարատ	23459	4/121	Պղպեղներ	Բուլղարական	հա	0.1		Yes	
<b>Մանրամասն նկարագրություն.</b>			Վնասված ջիեղեղի արդյունքում՝ փոխպատվաստումից երկու շաբաթ անց: Կարող է վերատնկվել բուժված սածիլների օգտագործման միջոցով:							
Տիգրան Արիյան	Արարատ	23459	4/345	Պղպեղներ	Բուլղարական	հա		0.2		40%
<b>Մանրամասն նկարագրություն.</b>			Վնասված կարկուտի արդյունքում, վնասվել է մրգերի արտաքին տեսքը, կարող է վաճառվել ավելի ցածր գնով: Պետք է կիրառվեն տերևային սնուցման պարարտանյութեր և ֆունգիցիդներ: Եկամտի 40% անկում է գրանցվել՝ որակի անկման և քանակի նվազման պատճառով:							
Տիգրան Արիյան	Արարատ	23459	4/098	Եգիպտացորեն	ZP 430	հա	2		Այո	
<b>Մանրամասն նկարագրություն.</b>			Ոչնչացված ջրհեղեղի արդյունքում. պետք է վերատնկվի երկու շաբաթ անց՝ վաղահաս սորտի օգտագործման միջոցով:							
Տիգրան Արիյան	Արարատ	23459	4/907	Պղպեղներ	Բուլղարական	հա	1	1	Այո	30%
<b>Մանրամասն նկարագրություն.</b>			Ջրհեղեղը ոչնչացրել է պղպեղների 1 հա հողատարածք: Պետք է փոխարինվի եգիպտացորենով, որի բերքատվությունը նվազել է ուշ արտադրության պատճառով: 1 հա-ն վնասվել է կարկուտի պատճառով, վնասվել է բերքի արտաքին տեսքը: Պետք է կիրառվեն տերևային սնուցման պարարտանյութեր և ֆունգիցիդներ: Եկամտի 40% անկում է գրանցվել՝ որակի անկման և քանակի նվազման պատճառով. վաճառվել է ավելի ցածր գնով:							

ՎԳ 3 - Մարզ/Փորձագետ				
Ծախսեր				
Կայուն տարեկան եկամուտ/միավոր	Վերատնկում, ծախս /միավոր (ոչնչացված)	Վերատնկումից ստացված եկամուտ/բերքատվություն/միավոր	Վերականգնման համար պահանջվող ծախսեր/միավոր (վնասված միավորներ)	Կորուստ
#	ՀՀ Դրամ	ՀՀ Դրամ	ՀՀ Դրամ	ՀՀ Դրամ
Ե	Զ	Է	Ը	Թ
9,000	1075	4000		607.5
<b>Հավելյալ նկարագրություն</b>				
9000			2000	1120
<b>Հավելյալ նկարագրություն</b>				
2,000	200	1000		2400
<b>Հավելյալ նկարագրություն</b>				
9,000	200	5000	720	7620
<b>Հավելյալ նկարագրություն</b>				

ԱԳ ձևեր՝ լրացված մարզերի կողմից՝ անհրաժեշտ փորձագետների օժանդակությամբ

Արժեքի գնահատման ձև				
Ակտիվների մուտք #	4/345			
Կայուն տարեկան եկամուտ /միավոր/1 հա				
Իր	Միավոր	# միավորներ թից	Ծախս/միավոր	Ընդհանուր
		#	ՀՀ Դրամ	ՀՀ Դրամ
Պղպեղ I դաս	S	20	250	5000
Պղպեղ II դաս	S	20	150	3000
Պղպեղ III դաս	S	10	100	1000
Ընդհանուր	Հա	50		9000

Արժեքի գնահատման ձև				
Ակտիվների մուտք #	4/907			
Վերականգնման համար պահանջվող ծախսեր/միավոր (վնասված միավորներ)				
Իր	Միավոր	# միավորներ թից	Ծախս/միավոր	Total
		#	ՀՀ Դրամ	ՀՀ Դրամ
Ֆունգիցիդ	կգ	7	60	420
Պարարտանյութ	տ	1	300	300
Ընդհանուր	հա			720

Արժեքի գնահատման ձև				
Ակտիվների մուտք #	4/121			
Վերատնկման համար պահանջվող ծախս /միավոր/1հա				
Իր	Միավոր	# միավորներ թից	Ծախս/միավոր	Ընդհանուր
		#	ՀՀ Դրամ	ՀՀ Դրամ
Սածիլներ	հա	50000	0.02	1000
Տնկում	օր	1	50	50
Մշակում	հա	0.1	250	25
Ընդհանուր	հա			1075

## ՎԳ5 – ԱՆԱՄՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

<b>Է Վնասներ</b>	
Բանաձև: Ա * Դ	<u>Ոչնչացված կենդանիներն</u> անկած մթերատու կենդանիներն են և այն կենդանիները, որոնք անկում են աղետին հաջորդող երկու շաբաթների ընթացքում՝ աղետի հետևանքների պատճառով: Աղետի պատճառով բռնի կերպով մորթված կենդանիները նույնպես ներառվում են այդ շարքում: Ոչնչացված կենդանիների հետ կապված ծախսերը դասվում են փոխարինման համար պահանջվող ծախսերի շարքում:
<b>Ը Կորուստներ</b>	
Բանաձև: Բ*Գ*Ե	<u>Արտադրական եկամտի/արժեքի նվազում</u> ՝ աղետի տարվա ընթացքում կենդանական արտադրանքի (միս, կաթ, ձու, մեղր և բուրդ) և դրանց առնչվող եկամուտ/արժեքի նվազման պատճառով, մինչև արտադրության վերականգնումը: Գնահատումն իրականացվում է՝ աղետին նախորդող շրջանի միջին արտադրություն/եկամուտ/արժեքից հանելով աղետին հաջորդող շրջանի արտադրություն/եկամուտ/արժեքը՝ այն տարվա համար, որի ընթացքում տեղի է ունեցել աղետը:
Բանաձև: Բ*Զ	<u>Ավելի բարձր կամ ավելացված արտադրական ծախսեր</u> ՝ վերականգնման շրջանում պահանջվող ռեսուրսների աճի պատճառով (մինչև 1 տարի), ներառյալ՝ անասնակերի, անասնաբուժական դեղորայքի հավելյալ քանակություններ, հավելյալ խնամք, ինչպես նաև ռեսուրսների ավելի բարձր գներ՝ մատակարարման տուժած շղթաների վրա աղետի թողած հետևանքների պատճառով: Ավելի բարձր արտադրական ծախսերը ներառում են նաև արտադրական նույն սեզոնի ընթացքում տապակայի համար նախատեսված ճտերի կամ ձկան փոխարինումը:

Վնասները հաշվարկելու համար կիրառվող բանաձևն է  $E = U * D$ , իսկ կորուստները հաշվարկելու բանաձևը՝  $L = (B * G * E) + (U * E) + (B * Z)$

Վնասների և կորուստների վերաբերյալ որակական և քանակական բնույթի տվյալները տրամադրվում են համայնքների կողմից, մինչդեռ հարակից ծախսերը/արժեքները հաշվարկվում են մարզային մակարդակում՝ աղետից տուժած շահագրգիռ բոլոր համայնքներին ստանդարտացված ծախսեր/արժեքներ ներկայացնելու նպատակով:

Աղյուսակ 7: ՎԳ5 Վնասի գնահատման ձև – Անասնաբուծություն									
Նույնականացում		Հետևանքներ			Ծախսեր			Վնաս և կորուստ	
ՎԳ2 Ակտ իվներ ի մուտք #	Միավորներ	Վերացած միավորներ	Տուժած/վնասված միավորներ	Մթերատվության անկման չափը	Մեկ միավորի փոխարինման համար պահանջվող ծախսեր	Կայուն տարեկան եկամուտ	Վերականգնման համար պահանջվող ծախսեր	Վնաս	Կորուստ
	#, կգ	#	#	%	ՀՀ Դրամ	ՀՀ Դրամ	ՀՀ Դրամ	ՀՀ Դրամ	ՀՀ Դրամ
		Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը
<b>Նշումներ և նկարագրություն.</b>									

Վնասների գնահատման համայնքային հանձնաժողովը տրամադրում է հետևյալ տեղեկությունները.

- **Սյունակ «Ակտիվների մուտք#»:** Համայնքի կողմից նշանակված չկրկնվող համարն է, որը գնահատված ակտիվը միավորում է նույնականացման տեղեկատվության, համապատասխան նկարագրության ու համապատասխան ԱԳ ձևի հետ:
- **Սյունակ «Միավոր»:** Այն միավորներն են, որոնց միջոցով արտահայտվում է քանակը, և որոնց համար հաշվարկվում է վնասը:
- **Նշումներ և նկարագրություն:** Տուժած կենդանիների և աղետի հետևանքների վերաբերյալ համապատասխան ընդհանուր տեղեկություններ: Տուժած անասնազխաքանակի պատկերը և հարակից վնասներն ու կորուստները նկարագրող տեղեկատվությունը պետք է հնարավորինս մանրակրկիտ լինի և լավագույնս ներառի՝
  - Նկարագրություն. սեռ, տարիք, ցեղատեսակ, կենդանի քաշ, ծինների քանակը, մթերատվություն, անասնազխի խտություն և այլն
  - Հետևանքի նկարագրություն. անհետացած, վերացած, վնասվածքի տեսակ, վնասվածքի աստիճան, արտադրողականության կորուստ, ակնկալվող վերականգնում, անհրաժեշտ բուժում և այլն

Մարզային հանձնաժողովը կարող է սահմանված հարակից վնասներին և ծախսերին առնչվող հավելյալ պնդումներ ավելացնել:

- **Սյունակ (Ա)** Նույն դասին պատկանող անկած և անհետացած (անկած համարվող) քանակը (#);
- **Սյունակ (Բ)** Վնասվածք ստացած կամ հիվանդ կենդանիների քանակը (ակնկալվում է բուժում) (#). Վնասվածքի/հիվանդության տեսակի և պահանջվող բուժիչ գործողությունների վերաբերյալ հավելյալ տեղեկատվություն պետք է տրամադրվի նկարագրության մեջ:
- **Սյունակ (Գ)** Կենդանիների տարեկան մթերատվության/եկամտի/արժեքի նվազման գնահատված չափը (կաթ, ձվեր, մեղր և միս)՝ վնասվածքի պատճառով և մինչև մթերատվության վերականգնումը՝ առավելագույնը մեկ տարվա կտրվածքով (%):

Մարզերում մարզպետարանների «Գուղատնտեսության և բնապահպանության վարչությունը» (ԳԲՎ) տրամադրում է վնասների և կորուստների հետ կապված ծախսերն, այդ թվում՝

- **Մյունակ (Դ) Մեկ միավորի փոխարինման համար պահանջվող ծախս**, այն է՝ նույն կամ նման ցեղատեսակի, տարիքի և քաշի կենդանիներին առչվող համալիր ծախսերը: Այն դեպքում, երբ կենդանիները հասանելի չեն տեղական շուկայում և պետք է ներմուծվեն, տեղափոխվեն և կարանտինի ենթարկվեն, և հավելյալ ծախսերն ընդգրկված չեն կենդանիներին առնչվող ստանդարտ ծախսերի մեջ, դրանք կարող են հաշվարկվել՝ ներառելով փաստացի փոխարինման համար պահանջվող բոլոր ծախսերը:
- **Մյունակ (Ե) Արտադրողների կողմից սահմանված կենդանու մեկ շնչից ստացվող միջին եկամուտը** նման ցեղատեսակի և տարիքի կենդանու մեկ շնչից ստացվող միջին արտադրանքն է՝ հաշվարկված կենդանիների բուծումից ստացվող եկամուտ/արժեքի բոլոր աղբյուրների համար: Եկամտի արժեքը կարող է սահմանվել մարզային իշխանությունների կողմից՝ հիմնվելով կայուն արտադրության ծախս/օգուտ հաշվարկների վրա կամ հաշվարկվի ԱԳ ձևում:
- **Մյունակ (Զ) Վերականգնման համար պահանջվող ծախսերն** ավելի բարձր արտադրական ծախսերի մաս են կազմում և հնարավորություն են տալիս գնահատել լրացուցիչ այն ներդրումները, որոնք անհրաժեշտ են վնասվածք ստացած կամ հիվանդ կենդանիների արտադրողականությունը վերականգնելու համար: Այդ ծախսերն առնչվում են կենդանիների բուժմանը՝ ըստ վերջինների ստացած վնասվածքի և հիվանդության նկարագրության: Դրանք կարող են ներառել լրացուցիչ բոլոր այն ներդրումները, որոնք չէին իրականացվի, եթե աղետը տեղի չունենար: Վերականգնման համար պահանջվող ծախսերը հաշվարկվում են աղետից հետո առավելագույնը մեկ տարվա կտրվածքով և ներկայացվում ԱԳ ձևում:

Ներքոհիշյալ աղյուսակում ներկայացված զարգացումները տրամադրում են անասնաբուծության ոլորտին սպառնացող տարբեր վնասների և կորուստների հաշվարկման օրինակ: Նմուշն օգտագործում է Հոլլտեյն ցեղատեսակին պատկանող տավարի (կով) օրինակը: Յուրաքանչյուր վնաս/կորուստի դաս ներկայացված է առանձին շարքով/գույնով: Վերջում ներկայացված ամփոփումը ցուցադրում է, թե ինչպես կարող են վնասներն ու կորուստները համատեղ հաշվարկվել՝ կիրառելով Excel-ով ստեղծված էլեկտրոնային ձևանմուշներում առկա բանաձևերը:

5) ՎԳ5 ԵՎ ԱԳ – ԱՆԱՄՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ և ՁԿՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՎԳ 5 – Համայնք												
Նույնականացում			Ակտիվ				Հետևանքներ					
Անուն (Իրավաբան ական/ Ֆիզիկական անձ)	Համայնք	Չկրկ նվող ID/Գր անցո ւմ #	ԱԳՀ ակտի վների մուտք #	Տեսակ	Ցեղատե սակ, կիրառո ություն	Միավ որ	Վերացած , մահացած միավորնե ր/ #	Վնասվ ած ստացա ծ միավոր ներ / #	Տարեկան մթերատվո րյան նվազման մասնաբաժ ին %			
						#, kg, ton				A	B	C
Տիգրան Արիյան	Արարատ	23459	5/121	Կով	Հովիտեյ ն	#	2					
<b>Մանրամասն նկարագրություն.</b>			Մեկ մահացած, մեկ անհետ կորած կով									
Տիգրան Արիյան	Արարատ	23459	5/345	Կով	Հովիտեյ ն	#		1	30%			
<b>Մանրամասն նկարագրություն.</b>			Կրծաբորբով (մաստիտ) տառապող կովերին բուժելու նպատակով անհրաժեշտ կլինի հակաբիոտիկ և հակաբորբոքային դեղերի օգտագործում մեկ ամիս ժամկետով									
Տիգրան Արիյան	Արարատ	23459	5/098	Կով	Հովիտեյ ն	#	2	1	30%			
<b>Մանրամասն նկարագրություն.</b>			Հակաբիոտիկներով թերապիա ստացած երկու մեռած կով, որոնցից մեկը թոքաբորբով է տառապել ջրերի մոտ օրեր շարունակ կանգնելու պատճառով									
Տիգրան Արիյան	Արարատ	23459	5/907	Ծածանն երի արտադր ությամբ զբաղվող ֆերմեր ային տնտես ություն	Արծաթ ագույն ծածան	տոնն ա	12					
<b>Մանրամասն նկարագրություն.</b>			Ջրհեղեղը վնասել է նաև ամբարտակը, որի հետևանքով վերացել է 1 կգ միջին քաշով 12000 գույն ծածան է									

ՎԳ 5 - Մարզ/Փորձագետ				
Ծախսեր			Վնասներ	
Մեկ միավորի փոխարինմ ան համար պահանջվո ղ ծախս	Կայուն տարեկան եկամուտ/մի ավոր	Վերականգնմ ան համար պահանջվող ծախսեր/միավ որ	Վնաս	Կորուստ
ՀՀ Դրամ	ՀՀ Դրամ	ՀՀ Դրամ	ՀՀ Դրամ	ՀՀ Դրամ
D	E	F	G	H
2,000	2,400		4000	4800
<b>Հավելյալ նկարագրություն</b>				
	2,800	400	0	1240
<b>Հավելյալ նկարագրություն</b>				
2,000	2,800	400	4000	6840
<b>Հավելյալ նկարագրություն</b>				
5,000	2,000		60000	24000
<b>Հավելյալ նկարագրություն</b>				

**ԱԳ ձևեր՝ լրացված մարզերի կողմից՝ անհրաժեշտ փորձագետների օժանդակությամբ**

Արժեքի գնահատման ձև				
Ակտիվների մուտք #	5/121			
Հոլշտեյն ցեղատեսակի փոխարինման համար պահանջվող ծախս				
Իր	Միավոր	# միավորներ թից	Ծախս /միավոր	Ընդհանուր
		#	ՀՀ Դրամ	ՀՀ Դրամ
Կով Հոլշտեյն	#	1	1800	1800
Ներմուծման համար օահանջվող ծախս	#	1	50	50
Տրանսպորտ	#	1	150	150
Ընդհանուր		3		<b>2000</b>

Արժեքի գնահատման ձև				
Ակտիվների մուտք #	5/345			
Տարեկան կայուն եկամուտ				
Իր	Միավոր	# միավորներ թից	Ծախս /միավոր	Ընդհանուր
		#	ՀՀ Դրամ	ՀՀ Դրամ
Կաթ	Լ	5000	0.5	2500
Հորթ	#	1	300	300
Ընդհանուր	#			<b>2800</b>

Արժեքի գնահատման ձև				
Ակտիվների մուտք #	5/098			
Վերականգնման համար պահանջվող ծախս/միավոր/գլուխ				
Իր	Միավոր	# միավորներ թից	Ծախս /միավոր	Ընդհանուր
		#	ՀՀ Դրամ	ՀՀ Դրամ
Անասնաբույժ	Օր	3	50	150
Հակաբիոտիկներ	մլ	200	0.5	100
Հավելումներ	կգ	3	50	150
Ընդհանուր	Հա			<b>400</b>

## 2. Արժեքի գնահատման ձև (ԱԳ)

Վնասների/կորուստների հաշվարկման ժամանակ թափանցիկության ապահովումն էական նշանակություն ունի: Հետևաբար, տեղեկատու ծախսերի սահմանման և մշակման համար կիրառվող հաշվարկները խնամքով զետեղվում են Արժեքի գնահատման ձևաթղթի/երի/մեջ՝ որպես ՎԳ ձևաթղթի հավելված, որն անհրաժեշտության դեպքում վնասների արժեքի գնահատման համար կիրառվող հաշվարկների վերաբերյալ հստակեցումներ և նկարագրություններ է տրամադրում: Աղյուսակ 8-ի մեջ ներկայացված է այդ ձևաթղթի մեկ օրինակ: Արժեքի գնահատման ձևաթուղթը ծառայում է որպես վնասների և կորուստների հաշվարկումը համընդհանուր կերպով բնորոշող փաստաթուղթ՝ ինչպես որ ներկայացված է Հավելված 2-ում: Այն կիրառվում է ներքոհիշյալների համար:

1. Ենթակառուցվածքների և սարքավորումների վնասների գնահատում (հաշվարկներ գնման/կառուցման գնի, արժեզրկման և մնացորդային արժեքի վերաբերյալ)
2. Արտադրության լրացուցիչ կամ ավելացած ծախսեր, որոնք հանգեցնում են կորուստների, եթե պարտքերի վճարում չի սահմանվում
3. Վերանորոգման/վերականգնման/վերակառուցման համար պահանջվող ծախսեր, եթե դրանց անհրաժեշտությունը կա
4. Փոխարինման համար պահանջվող ծախսեր՝ բացառությամբ գնումների ծախսերի, եթե դրանց անհրաժեշտությունը կա
5. Բերքատվության ոչ ստանդարտ ցուցանիշներ, գներ և եկամուտներ այն դեպքերում, երբ արտադրության տեսակը կամ դրա ինտենսիվությունը պարտադրում են շեղվել սահմանված ստանդարտ արժեքներից:

Աղյուսակ 8. Արժեքի գնահատման ձևաթուղթ				
Ակտիվների մուտք # <sup>1</sup>	...			
Կայուն տարեկան եկամուտ/արժեք, 2) Փոխարինման համար պահանջվող ծախս/միավոր 3) Վերականգնման համար պահանջվող ծախս /միավոր և այլն				
Իր <sup>2</sup>	Միավոր <sup>3</sup>	#	Ծախս /միավոր <sup>5</sup>	Ընդհանուր <sup>6</sup>
	կգ, տոննա, մ, մ <sup>2</sup> , մ <sup>3</sup> , լիտր, ժամ	#	ՀՀ Դրամ	ՀՀ Դրամ
...	...	...	...	...

### Հրահանգներ

- 1) Նույնը, ինչպես որ ներկայացված են Վնասի փոխհատուցման պահանջի ձևաթղթի և Վնասների գնահատման ձևաթղթի մեջ
- 2) Թվարկել տարբեր իրեր, որոնք ձևավորում են տվյալ ծախսերի ընդհանուր արժեքը
- 3) Տարբեր առարկաների համար հաշվարկված միավորների տեսակները
- 4) Միավորների քանակը
- 5) Յուրաքանչյուր առարկայի համար պահանջվող միավոր ծախսը
- 6) Ընդհանուր արժեքը պետք է ՎԳ ձևաթղթերում ներկայացվի որպես՝ 1) Կայուն տարեկան եկամուտ/միավոր 2) Փոխարինման համար պահանջվող ծախս/միավոր 3) Վերականգնման համար պահանջվող ծախս/միավոր և այլն:

### 3.2.2 Ապրանքների, ծառայությունների մատուցման և կառավարման գործընթացներում տեղի ունեցած խախտումների պատճառով առաջացած կորուստների գրանցում

Աղյուսակ 9-ը օգտագործվում է՝ գնահատելու աղետի հետևանքով առաջացած կորուստները, որոնք կապված են ապրանքների և ծառայությունների մատակարարման անկարողության հետ կամ պայմանավորված են կառավարման հետ կապված խոչընդոտներով: Ձևաթուղթը պետք է կիրառվի՝ ապրանքների և ծառայությունների խոշոր մատակարարների կորուստները փաստաթղթավորելու

նպատակով, ինչպիսիք են ոռոգման ցանցերն ու օբյեկտները, որոնց ոչնչացումը կհանգեցնի սահմանված վճարներից ստացվող եկամտի կորստի:

Այս բաժնում պետք է նարառվեն միայն այն կորուստները, որոնք չեն կարող հաշվարկվել որպես ՎԳ-ի մի մաս

**Աղյուսակ 9: Ապրանքների, ծառայությունների մատակարարման և կառավարման խաչընդոտների պատճառով առաջացած կորուստներ**

Գ=Ա-Բ Զ=Գ+Դ+Ե	Գնահատված եկամուտ (ՀՀ Դրամ)					Ընդհանուր կորուստներ
	Աղետի տարի			Տարի 1	Տարի 2	
	Աղետից առաջ	Աղետից հետո	Կորուստներ	Կորուստներ	Կորուստներ	
	Ա	Բ	Գ	Դ	Ե	
Ոռոգման համար սահմանված վճարներ						
Պահեստավորման համար սահմանված վճարներ						
Կորսված սուբսիդիաներ						

#### **4. ՎՆԱՍՆԵՐԻ ԵՎ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐ**

Աղետների ազդեցությունների վերաբերյալ տվյալների և տեղեկատվության հանրագումարը հնարավորություն է տալիս կատարել տարբեր ցուցանիշների և ազգային ու մարզային մակարդակի վիճակագրական տվյալների խաչաձև համադրումներ:

Աղյուսակ 10-ում ներկայացված հանրագումարը, ըստ էության, հետևում է երկու ասպեկտների և կատարում դրանց համեմատությունը. 1) վնասները և կորուստները (թվերի, արժեքների և տեսակների առումով) և 2) ազդեցություն կրած անձանց (ֆիզիկական և իրավաբանական) քանակը՝ զուգակցված ժամանակային և տարածքային մեծություններով: Այս երկու ասպեկտների խաչաձև համադրումը թույլ է տալիս վերլուծել հետևյալ տեղեկատվությունը.

- Արտադրության ընդհանուր և միջին քանակը, որը կարող է համեմատվել ազդեցություն կրած ընդհանուր և միջին արտադրության հետ մեկ տնային տնտեսության, համայնքի կամ ՄԱՐԶԻ հաշվով:
- Ընդհանուր և միջին վնասները ակտիվների նկատմամբ՝ քանակի և արժեքի առումով մեկ տնային տնտեսության, համայնքի հաշվով, ինչը կարող է համեմատվել միջին ակտիվների հետ:
- Մեկ անձին բաժին ընկնող ընդհանուր և միջին կորուստները, որոնք կարող են համեմատվել միջին եկամուտների, պարտքերի և ֆինանսական միջոցների հասանելիության հետ, ինչպես նաև կորստի սպասվող տևողությունը, որը կարող է համեմատվել տարեկան եկամուտների հետ:

Աղետի ազդեցություններին և դրանց բաշխմանը վերաբերող հանրագումարի միջոցով տրվում է Տարածքային բաշխման ընդհանուր պատկերը, ինչն արվում է յուրաքանչյուր Համայնքի համար մեկ ամփոփագիր լրացնելու և ըստ յուրաքանչյուր մարզի՝ այն մարզային մակարդակով ամփոփվելու միջոցով:

Կորուստների ժամանակային բաշխվածությունն ընդգրկում է 1) աղետի տարվա ընթացքում կրած կորուստները և 2) այն կորուստները, որոնք տեղի կունենան հաջորդող տարիներին մինչև կարգավորման հասնելը: Այս ասպեկտը կարևոր է երկարատև աղետների համար, ինչպիսիք են բազմամյա երաշտները, երբ ծառայությունները և ակտիվները կարող են մնալ անմատչելի երկարատև

Ժամանակահատվածներում: Օրինակ՝ չվերանորոգված ռոտզման ենթակառուցվածքները կարող են բացասաբար ազդել խառը ցանքերի սեզոնի վրա՝ փոփոխություններ առաջացնելով ցանքաշրջանառության կառուցվածքում, այլընտրանքային ջրամատակարարման մեջ կատարվող ներդրումներում և այլն:

Աղյուսակ 10. Վնասների և կորուստների ամփոփիչ աղյուսակ								
Համայնք/ՄԱՐԶ		ԱՂԵՏԻ ԴԵՊՔ			<i>(տեսակ)</i>			
ԴԵՊՔԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ		ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ԿՐԱԾ ՏԱՐԱԾՔ			<i>(հա կամ կմ<sup>2</sup>)</i>			
Կետ		Միավոր	Աղետի տարի			Հետագա կորուստներ		Ընդամենը
			Վնասներ	Կորուստներ	Ընդամենը	Տարի 1	Տարի 2	ՀՀ դրամ
Բնակչություն	Ազդեցություն կրած համայնքներ							
	Ազդեցություն կրած գյուղատնտեսությամբ զբաղվող տնային տնտեսություններ	(#)						
	Ազդեցություն կրած իրավաբանական անձինք	(#)						
	Ազդեցություն կրած մարդիկ	(#)						
	Խոցելի տնային տնտեսություններ	(#)						
Ակտիվներ	Ազդեցություն կրած գյուղատնտեսական հողեր	(հա)						
	Անասունների կորուստ	(#)						
Վնաս	Ենթակառուցվածքներ և հողեր	Դրամ						
	Ակտիվներ և սարքավորումներ	Դրամ						
	Անասունների գլխաքանակ	Դրամ						
	Բազմամյա մշակաբույսեր	Դրամ						
	Միամյա մշակաբույսեր	Դրամ						
	<b>Ընդամենը</b>	<b>Դրամ</b>						
Կորուստ	Անասունների գլխաքանակ	Դրամ						
	Բազմամյա մշակաբույսեր	Դրամ						
	Միամյա մշակաբույսեր	Դրամ						
	<b>Ընդամենը</b>	<b>Դրամ</b>						
ՎՆԱՍՆԵՐ ԵՎ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ		Դրամ						
Կարծիք.								
Լրացնող անձ		<i>(անուն և պաշտոն)</i>	ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ			ԱՄՍԱԹԻՎ		

## 5. ԱՂԵՏԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Աղետները կարող են ունենալ նաև երկարատև ազդեցություն սոցիալ-տնտեսական իրավիճակի և մարդկային զարգացման վրա, որը պետք է գնահատվի ոչ միայն աղետի ազդեցության քանակական, այլ նաև դրա որակային հատկանիշներից ելնելով: Այսպիսով, հաշվետվության այս գլուխը կփորձի բացահայտել աղետների հետևանքների բազմաշերտ ազդեցության նշանակությունը տուժած համայնքների և բնակչության համար:

Ազդեցությունների գնահատման նպատակն է անդրադառնալ աղետներին առնչվող ընդունված ենթադրություններին:

**1. «Վնասված ընկերությունները կարող են վերսկսել իրենց արտադրությունն՝ օգտագործելով իրենց սեփական ռեսուրսները հնարավորինս արագ ժամանակամիջոցում»:**

Որպես այդպիսին՝ գնահատման մեջ ներկայացված կորուստների դեպքերը լավագույն հնարավոր սցենարներն են: Սակայն, եթե (սովորաբար հենց այսպես էլ պատահում է) ֆերմերները չեն կարողանում հոգալ իրենց վերականգնման ծախսերը ժամանակին, պետք է ակնկալել, որ կորուստները կշարունակվեն դեռևս երկար ժամակահատվածում, կաճի աղքատության մակարդակը, գները կբարձրանան, պետական եկամուտները կարող են նվազել, և, եթե վնասվել են հիմնական եկամուտ ապահովող մշակաբույսերը, տեղական գյուղատնտեսությունը կարող է պարզապես փլուզվել: Որպես հետևանք, վերականգնման կարիքները շարունակաբար կփոխվեն և անհարաժեշտ կլինի դրանք համապատասխանաբար հարամարեցնել:

**2. «Չի լինի որևէ հետընթացային շուկային իրավիճակ կամ աղետի կրկնություն»**

Վնասված տարածքները մշտապես ենթարկվում են խրոնիկական ցնցումների (օր.՝ ջրհեղեղ, երաշտ կամ կարկտահարված տարածքներ), որոնք, եթե համապատասխանաբար չհասցեագրվեն, կշարունակեն խաթարել վնասված կենսապայամները և վերականգնման բոլոր նախկին ջանքերը:

Հետևյալ գլուխներն անդրադառնում են հնարավոր հետևանքներին, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել համայնքային և մարզային մակարդակներում՝ ելնելով վերը նշված ենթադրություններից:

### 5.1 ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆ

Տնտեսական ազդեցության հաշվարկմամբ գնահատվում է վարչարարական միավորի կարողությունները (մարզային կամ համայնքային)՝ աղետի տնտեսական հետևանքները մեղմելու ուղղությամբ, ինչպես նաև սահմանվում է վերջինիս կողմից վերականգնման նպատակով ցուցաբերվելիք օժանդակության մակարդակը: Տնտեսական ազդեցությունը հաշվարկվում է աղետի ներկայիս և երկարատև ազդեցությունների կտրվածքով, որը կարող է տևել մի քանի տարի:

Աղետի տնտեսական ազդեցությունների հետևանքով կարող են ակնկալվել հետևյալ սպասելիքները՝

- Արտադրանքի արժեքը, որը, սակայն չի հաջողվի ստանալ աղետի տարում կամ դրան հաջորդող տարիներին
- Արտադրությունից ակնկալվող բարձր գներ ընթացիկ և հաջորդող օրացույցային տարիներին
- Ազդեցությունները գյուղատնտեսական արտադրանքի որակի, քանակի և դեպի շուկա հասանալիության վրա (օր.՝ աղտոտված արտադրանք, վիճակի և ապրանքային տեսքի վնասում և այլն)
- Ազդեցություն ապրանքների և ծառայությունների կամ արժեղթաների հասանելիության վրա (օր.՝ մարզային ռոտգման համակարգի, պահեստային համալիրի, տեղական շուկաների վրա և այլն)
- Ամփոփ հայացք տնտեսական իրավիճակի վրա և առաջարկներ այն բարելավելու ուղղությամբ՝ օգտագործելով մարզային և պետական միջոցները:

## 5.2 ՄԱՐԴԿԱՆՑ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՆԵՐՈՒԺ

Ազդեցություն կրած գյուղատնտեսողների և հատկապես՝ աղքատության գծից ներքև կամ այդ գծին մոտ գտնվողների սոցիալ-տնտեսական իրավիճակի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը և վերլուծությունն ունեն առաջնակարգ նշանակություն: Նրանց կարգավիճակի մասին տվյալները՝ ցանքաշրջանառության օրացույցում տրամադրված տեղեկատվության հետ միասին կարող են պարզաբանել, թե արդյո՞ք աղետի նահանջը ժամանակավոր է (հետաձգված վերականգնում), մասնակի (մասնակի վերականգնում), թե սեզոնային/տարեկան (վերականգնում չկա):

Մարզային մակարդակով մարդկային զարգացման ազդեցության գնահատմամբ դիտարկվում են ազդեցություններ, որոնցից են.

- **Ազդեցություն աղքատության վրա** (մասնավորապես՝ գյուղական աղքատության), **եթե ազդեցություն կրած** մարդիկ կախում ունեն գյուղատնտեսությունից: Գնահատման միջոցով պետք է նշվի ազդեցությունը աղքատության մակարդակների վրա՝ ըստ անհրաժեշտության արդյունքները բաժանելով ըստ համայնքի/մարզի կամ արժեշտության:
- **Ազդեցությունը տնային տնտեսության և անձնական եկամուտների վրա** այն մարդկանց համար, ովքեր իրենց եկամուտների մասով ապավինում են գյուղատնտեսական արտադրությանը, և
- **Ազդեցությունը զբաղվածության և եկամուտների վրա** այն մարդկանց համար, ովքեր ապավինում են գյուղատնտեսության ոլորտում, ներառյալ՝ ցանքային ընկերություններում զբաղվածությանը. վերջինիս դեպքում աշխատանքները կարող են կատարվել արտաքին ռեսուրսների՝ աշխատողների կամ ծառայություն մատուցողների միջոցով:
- **Ազդեցություն պարտքերի և ֆինանսական միջոցների մատչելիության վրա.** Գնահատման միջոցով պետք է գնահատել, թե արդյո՞ք ազդեցություն կրածները (ֆերմերներ, ընկերություններ և այլն) ի գործ կլինեն բավարարել իրենց ֆինանսական պարտավորությունները կամ փոխառությամբ փող վերցնել:
- **Ազդեցություն սննդային անվտանգության և սպասվող զարգացման վրա՝** ցանքաշրջանառության օրացույցին և աղետի փաստացի ազդեցություններին համապատասխան:

Աղյուսակ 11-ը օգտագործվում է համայնքի և մարզի մակարդակով մարդկային զարգացման վրա ազդեցությունը գնահատելու և ամփոփելու նպատակով:

Աղյուսակ 11. Մարդկային զարգացման վրա ազդեցության հանրագումար							
Ազդեցություններ	Ակնկալվող ազդեցություններ						Ազդեցությունների հակիրճ նկարագրություն
	Հնդհանուր բնակչություն			Կանայք և երեխաներ			
	Ու	Մ	Թ	Ու	Մ	Թ	
Գյուղացիների աղքատության աճ							
Մանրամթերքի գների աճ							
Քաղց և թերսնում							
Պարտքի աճ							
Զբաղվածության կորուստներ							

Ակնկալվող ազդեցությունները պետք է բաժանել ըստ. 1) ազդեցությունների ընդհանուր բնակչության վրա, և 2) ազդեցությունների խոցելի խմբերի վրա. դրանք չափվում են որպես ուժեղ (Ու), միջին (Մ) կամ թույլ (Թ):

Ուժեղ «ազդեցությունը քաղցի և թերսնման վրա» կարող է պայմանավորված լինել գյուղացիների կողմից արտադրված սննդամթերքի պաշարների կորստով: «Պարտքի աճ» կարող է տեղի ունենալ, եթե գյուղացիները կախում ունեն վարկերից՝ տնկման կարիքների մասով: Ազդեցությունը «այլ ոլորտներում զբաղվածության վրա» կարող է ակնկալվել պայմանավորված գյուղատնտեսության ոլորտից այլ արտադրական ճյուղերին հումքի տրամադրման անկարողությամբ կամ ապրանքներ/ծառայություններ մատուցողներից միջոցների պահանջով:

Խոցելի խմբերի և ընդհանուր բնակչության վրա ազդեցությունները կարող են տարբերվել իրարից: Օրինակ, առաջինները կարող են ավելի շատ տուժել թերսնումից:

### 5.3 ԱՂԵՏՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Աղետի վերաբերյալ տվյալները և աղետի վտանգի վերլուծությունը հնարավորություն են տալիս դիտարկել հենց աղետի վտանգին անդրադարձող հարատև լուծումները: Խրոնիկական աղետների համար այն տալիս է կայուն լուծումների առաջնահերթությունների որոշման հնարավորություն, ի տարբերություն փոխհատուցման նպատակով օգնության իրավիճակային /ad-hoc/ միջոցառումների:

Առաջիկայում կրկնվելու հավանականություն չունեցող դեպքերի համար պետք է ուշադրությունը սևեռել քաղաքականության մշակման և գյուղատնտեսության ոլորտում դիմակայության վերականգնման վրա:

Մշտական լուծումների հնարավորություն չունեցող աղետների համար ուշադրություն պետք է դարձնել ցանքաշրջանառության ձևաթղթերի փոփոխման և արտադրողների արտադրական գործելակերպերի հարմարեցման վրա, այդպիսով՝ բարելավելով դիմակայությունը:

Աղետի վտանգի նվազեցմանը վերաբերող համայնքային/մարզային մակարդակի հանրագումարում պետք է տրվեն մանրամասներ և առաջարկություններ հետևյալի առնչությամբ.

- Դիմակայուն կենսագործունեություն և լավագույն որակի օբյեկտների վերականգնման հասկացություն:

Վերհանել աղետի հիմքում ընկած ռիսկերը/պատճառները և այն միջոցառումները, որոնք անհրաժեշտ են գյուղատնտեսական ոլորտի կենսագործունեության պաշտպանության, խոցելիության նվազեցման և դիմակայության բարելավման ապահովմամբ վերականգնում իրականացնելու համար: Դրան հասնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել և թվարկել հետևյալը.

  - Վտանգի տակ գտնվող կամ վտանգի ենթակա ենթակառուցվածքներ (ոռոգման ցանցեր, պահեստներ և այլն),
  - Անվտանգություն և կայունություն նույն հողատարածքում/վայրում արտադրությունը շարունակելու համար,
  - Օրենքների, քաղաքականությունների և կառավարման գործելակերպերի փոփոխություններ՝ առավել կայուն լուծումներին աջակցելու նպատակով:
- Հգորացնել աղետի վտանգի նվազեցման կառավարումը և պատրաստվածությունը

Վերհանել դիմակայությունն ուժեղացնելու հնարավորությունը տեխնիկական խորհրդատվության, մարդկային ռեսուրսների և փորձի, վերապատրաստման, պրակտիկ գործիքների և ծառայությունների միջոցով, ինչպիսիք են.

  - Աղետի վտանգի նվազեցման ինտեգրումը գյուղական և գյուղատնտեսական զարգացման քաղաքականություններում և ծրագրերում:
  - Բնական աղետների վաղ նախագուշացման համակարգեր և դրանց վերաբերյալ հաղորդումներ:
  - Նախապատրաստվածության պլանավորում գյուղատնտեսության, անասնապահության և անտառտնտեսության ենթաոլորտներում:
  - Արձագանքման ազդանշաններ գյուղատնտեսական տարբեր աղետներից յուրաքանչյուրի համար:
  - Արտակարգ իրավիճակների համապատասխան օղակների կարողությունների և հնարավորությունների հզորացում՝ գյուղատնտեսության ոլորտի աղետների վերաբերյալ իրազեկվածության և տեղեկացվածության բարձրացման միջոցով:
- Շրջակա միջավայրին առնչվող մտահոգություններ

Դիտարկեք աղետի ազդեցությունը էկոհամակարգի վատթարացման վրա, ինչպիսիք են՝ հողի էրոզիան, հողերի աղակալումը, անտառահատումը, օդի աղտոտումը և կենսաբազմազանության կորուստը, և այն, թե ինչքանով է այդ ազդեցությունը բացասական հետևանք ունեցել կենսագործունեության վրա:

- Դիմակայուն կենսագործունեություն ձևավորող տեխնոլոգիաներ և գործելակերպեր.  
Թվարկեք հայտնի (նոր/ժամանակակից) տեխնոլոգիաները և գործելակերպերը, որոնք ապացուցել են իրենց արդյունավետությունը հայտնի վտանգներից պաշտպանության հարցում՝ հաշվի առնելով տեղում առկա գիտելիքները և հաղթահարման դրական ռազմավարությունները, որ պետք է խթանել: Դրանցից են.
  - Խթանել մշակաբույսերի և անասունների այն սորտերը, որոնք առավել դիմակայուն են երաշտների, հեղեղների կամ սառնամանիքների նկատմամբ:
  - Ցանքի արդյունավետ համակարգերի մշակում, այնպես, որ անհրաժեշտ չլինի հողի մշակում երաշտի ենթակա տարածքներում:
  - Անասնակերի պահպանման մեթոդներ՝ առկա ռեսուրսների օգտագործմամբ կամ արժեքի ավելացմամբ:
  - Կենսագործունեության դիվերսիֆիկացում կամ առավել կայուն կենսագործունեության ռազմավարությունների խթանում:
  - Բնական ռեսուրսների կառավարման գործելակերպեր, որոնք նվազեցնում են աղետների բացասական ազդեցությունները և նպաստում համայնքների դիմակայությանը:

Սույն ուղեցույցի Հավելված 4-ում տրամադրվում է առանձին ստուգաթերթ/հարցաշար, որը պետք է օգտագործել համայնքային և մարզային մակարդակով համապատասխան տեղեկատվության հավաքագրման համար՝ գնահատելու աղետի ազդեցությունները հետևյալի վրա.

- 1) ազդեցություն մարդկային զարգացման վրա աղետից տուժած համայնքում,
- 2) հիմնական տեղեկատվություն աղետի վտանգի նվազեցման և դիմակայության զարգացման ներուժի վերաբերյալ,
- 3) փոփոխություններ ազդեցություն կրած տարածքի տնտեսության մեջ,
- 4) հիմնական ծառայությունների և ապրանքների մատչելիության կորուստ,
- 5) կառավարման համակարգի խափանումից բխող ազդեցություններ:

